Դա աննորմալություն կլինի, ինչպե՞ս կարելի է նման առաջարկություն անել: Աշխարհում ընդունված է, որ ընտրողի նվազագույն տարիքը պետք է լինի 18-ը: Իմ իմացած բոլոր երկրներում, համենայնդեպս, այդպես է: 16 տարեկանը լիարժեք պատասխանատվության ենթակա սուբյեկտ չէ, անձը լիարժեք քաղաքացի է դառնում 18 տարեկանից:

Կարդացեք՝ էջ 4

Դատելով ԱՄՆ փոխնախագահի խոսքից՝ ատոմակայանների արժեքը Հայաստանը պետք է վճարի ամբողջությամբ, իր ունեցած միջոցներից, իսկ վառելիքը եւ սպասարկումը կարվեն այլ մեխանիզմով, հնարավոր է՝ ԱՄՆ-ի կողմից տրամադրվի վարկ: Ջեյ Դի Վենսը չի էլ թաքցնում, որ դրա արդյունքում մեծանալու է ԱՄՆ-ի էներգետիկ անվտանգությունը:

Կարդացեք՝ էջ 5

Լինելով թույլ, պարտված, ոչ էֆեկտիվ իշխանություն, որը հայակենտրոն չէ եւ երրորդ կողմի շահերն է սպասարկում, ոչ թե համադրել աշխարհաքաղաքական տարբեր ուժային կենտրոնների շահերը, այլ խաղալ նրանց հակասությունների վրա, ինչն այնպիսի երկրների դեպքում, ինչպիսին մերն է, շռայլություն է, պարզ ասած՝ հիմարություն:

Կարդացեք՝ էջ 6

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 16 (4151), 11 փետրվար, չորեքշաբթի, 2026

www.hraparak.am

Փետրվարի 9-ին Երեւանի առաջին ատյանի դատարանը քննության է առել Սամվել Կարապետյանի պաշտպանների միջնորդությունը՝ իրենց պաշտպանյալի մոտ վարսահարդարի այցելություն թույլատրելու վերաբերյալ: Մեր տեղեկություններով, նախաքննական մարմինը տնային կալանքի տակ գտնվող Սամվել Կարապետյանի վարսավիրին թույլ չի տվել, որ այցելի նրանց տուն եւ Կարապետյանի մազերը կտրի: Եվ փաստաբանները ստիպված են եղել այս հույժ կարեւոր հարցի լուծման համար հասնել դատարան: Կարապետյանի պաշտպաններից մեկը՝ Արշակ Վարդանյանը, հաստատեց մեր տեղեկությունը՝ նշելով, որ դատարանը բավարարել է իրենց միջնորդությունը՝ թույլ տալով, որ վարսավիրն ամսական 2 անգամ Կարապետյանին ծառայություն մատուցի: «ՔԿՀ-ում պահվելու ընթացքում վարսավիրն ազատ ելումուտ է ունեցել, բայց տնային կալանքի դեպքում բոլոր տեսակցություններն արգելվել են, բացառությամբ տան մի քանի աշխատակցի, վարսավիրի մասը բաց էր մնացել: Մենք պարբերաբար դիմել ենք քննիչին, դատախազին՝ մերժել են, պրոբացիային, ասել են՝ մեր տիրույթում չէ, հարկադրաբար դիմեցինք դատարան, որպեսզի այդ հարցը լուծվի»,- ավելացրեց փաստաբանը: Մեր տեղեկություններով, դատարանը մոտ 3 ժամանոց նիստ է արել՝ լսել կողմերին, որ նման բարդ որոշումը կայացնի:

ՔՊ-ն ամբողջությամբ մխրճվել է նախընտրական օրակարգի մեջ, մինչ ներկուսակցական ընտրությունները կլինեն, եւ հայտնի կդառնա, թե ովքեր ցուցակի որ հորիզոնականում են տեղավորվելու, ՔՊ-ականներն ակտիվ ներգրավված են տարածքային կառույցների, ինչպես նաեւ՝ ընտրական հանձնաժողովներում ներկայացուցիչներ ընտրելու գործերին: Բոլոր մարզերի բոլոր համայնքներում ՔՊ-ն ԸԸՀ հանձնաժողովների «ձիգ» թեկնածուների է ներկայացնում կուսակցության աշխատակազմին, որը կկայացնի վերջնական որոշում, եւ թեկնածուների անունները կներկայացվեն ԿԸՀ: Ինչպես հայտնի է՝ օրենքով սահմանվում է, որ խորհրդարանում ներկայացված ուժերը 2-ական թեկնածու կարող են առաջադրել ԸԸՀ հանձնաժողովներում: Եվ չնայած ՔՊ-ականների շարքերում դեռ իրենց ճակատագրի հարցով խոր անորոշություն է, եւ հայտնի չէ՝ ով կլինի ցուցակի անցողիկ տեղում, ով՝ ոչ, սակայն, մեր աղբյուրի վստահեցմամբ, բոլորն անխտիր եւ անմնացորդ ներգրավված են նախընտրական պրոցեսներում, քանի որ հասկանում են, որ դրանից է կախված, թե ընտրությունից հետո, եթե ՔՊ-ն իշխանություն վերցնի, իրենց կյանքն ինչ ընթացքով կշարունակվի:

Դատարկ էմոցիաներ

Ինձ անհասկանալի են Վենսի այցից ոգեւորվածների եւ հիասթափվածների էմոցիաները: Որ այդ այցը չի կարող Հարավային Կովկասում ԱՄՆ գերտերության հաստատումն ազդարարել, մեր անվտանգային եւ այլ հարցերի լուծման բանալին լինել, հասկանալու համար մեծ ջանքեր պետք չեն՝ բավական է մեր հայացքն ուղղենք դեպի Վրաստան, հիշենք Աֆղանստանի ոչ հեռավոր անցյալի դեպքերը, վերադառնանք ուկրաինական իրականություն: Որ ամերիկյան հովանավորությունից զրկվելը կործանում չէ, դրա համար էլ բավական է դեմքով դառնանք դեպի Իրան: Հասկանալու համար, որ ԱՄՆ-ի հետ ընկերությունը հավերժ չէ, ու դրա վրա երկարաժամկետ պլաններ կառուցելը միամտություն է, ընդամենը պետք է հետեւենք Եվրոպայում ծավալվող իրադարձություններին, ԱՄՆ-Կանադա հարաբերություններին, Վենեսուելայի նախագահի ճակատագրին, Գրենլանդիայի դեպքերին: Այն, որ վաղեմի թշնամիները կարող են մեկ օրում բարեկամանալ, իսկ ճակատագրով իրար կապված ժողովուրդները՝ անվերադարձ թշնամանալ, դա էլ ապացուցվում է Թրամփ-Պուտին շփումների, ռուս-ուկրաինական պատերազմի օրինակով: Իսկ այն, որ Վենսի կես խոսքը կարող է Հայաստանի համար ճակատագրական լինել, եւ ոմանք երեկվանից դեպրեսիայի մեջ են, առավել եւս զավեշտալի է, քանի որ, անգամ եթե Թրամփն էլ իր անձնական հովանու տակ վերցնի Նիկոլ Փաշինյանին, եւ բոլոր գերտերությունների ղեկավարները միաբերան պնդեն, որ նա պետք է վերընտրվի, ընտրողը լինելու է ՀՀ քաղաքացին, եւ անգամ սփյուռքում ապրող մեր հայրենակիցները հնարավորություն չունեն ազդելու ընտրությունների արդյունքների վրա: Ես հիշում եմ մեծ ձեռնարկատերերից մեկի վիրավորանքը, որ իր համայնքի յուրաքանչյուր բնակչի տարիներով օգնել է՝ ընտրությունների ժամանակ ոչ մեկն իր հորդորով չի քվեարկել: Ո՞ւմ վրա է ազդելու Վենսի կարծիքը:

Իշխող խմբակցությունը նախօրեին քննարկել է ԱԺ առողջապահության մշտական հանձնաժողովի նախագահի ընտրության հարցը, ապա քվեարկել թեկնածուներին, սակայն քվեարկությունը տապալվել է: Հիշեցնենք, որ Հռիփսիմե Հունանյանին պարտադրված հրաժարականից հետո այդ տեղի համար առաջադրվել էր երկու թեկնածու՝ պետահիրավականի անդամ Տրդատ Սարգսյանը եւ առողջապահության հանձնաժողովի անդամ Վանիկ Օհանյանը: Թեպետ քվեարկության արդյունքում վանաձորցի Օհանյանը Տրդատ Սարգսյանից շատ ձայն է հավաքել, սակայն, կուսակցության կանոնադրության համաձայն, չի ստացել քվեարկողների մեծամասնության քվեն: Այսինքն, շատերը չեն մասնակցել քվեարկությանը: Իսկ քիչ թվով պատգամավորներ են մասնակցել, քանի որ մեծ մասն արդեն ճամպրուկային տրամադրությունների մեջ է: Ըստ ամենայնի՝ կհայտարարվեն հանձնաժողովի նախագահի նոր ընտրություններ, եւ նոր թեկնածուներ կառաջադրվեն կամ կինքնառաջադրվեն:

ԿԼՔԻ՞ ԱՐԴՅՈՔ ՔՊ-Ն

Հայաստանում քաղբանտարկյալների եւ նրանց խախտված իրավունքների վերականգնման վերաբերյալ «Հայաստան» խմբակցության նախաձեռնած հայտարարության նախագիծը երեկ մերժվեց իշխող մեծամասնության կողմից: Այն 52 դեմ, 21 կողմ ձայն ստացավ: Ուշագրավ է, սակայն, որ ՔՊ-ական պատգամավոր Հայկ Սարգսյանը՝ Շիշ բռնողը, սկզբում ձեռնպահ քվեարկեց, ապա քարտուղարությանը հայտնեց, որ դեմ է եղել: ՔՊ-ում Սարգսյանի քվեարկությունը երեկ բուռն քննարկումների առիթ էր դարձել: Շատերի կարծիքով, Սարգսյանը ՔՊ-ին փորձում է շանտաժ անել, թե կդառնա ընդդիմադիր, կանցնի ընդդիմադիր որեւէ ճամբար ու ընտրությունների ժամանակ իր կապերը կօգտագործի իշխանության դեմ: Հիշեցնենք, որ ՔՊ վարչությունը մերժել է Սարգսյանին եւ չի գրանցել պատգամավորության թեկնածու, իսկ օրեր անց Փաշինյանն ուղիղ տեքստով ակնարկեց, որ մերժման հիմքում ընկած են եղել կոռուպցիոն պատմություններ, որ դրանց հրապարակումը չի բխում պարոն Սարգսյանի շահերից, ինչը պատգամավորը մի քանի օր անց հերքեց:

ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԱՄՆ-ԻՑ ՏԵԽՆԻԿԱ ԳՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՆ ՏԱԼԻՍ ԵՎ ԴԱ «ՆԵՐԴՐՈՒՄ» ԱՆՎԱՆՈՒՄ

*«Հրապարակի» զրուցակիցը քաղաքագետ **Արմեն Բաղդասարյանն** է:*

- Փետրվարի 9-ին ԱՄՆ փոխնախագահ Ջեյմս Դեյվիդ Վենսն այցելեց Հայաստանի Հանրապետություն, ինչն իշխանությունների համար ցնծության առիթ է դարձել, հատկապես այն բանից հետո, երբ Վենսն ուղիղ տեքստով հայտարարեց, որ աջակցում է Փաշինյանի վերարտադրմանը: Լինելով աշխարհի ամենաժողովրդավար պետություններից մեկը՝ ԱՄՆ-ն այժմ հստակ ու անթաքույց միջամտում է Հայաստանի ներքաղաքական հարցերին: Ըստ Ձեզ՝ ո՞րն էր Վենսի այս հայտարարության նպատակը: Արդյոք նա չէ՞ր կարող ավելի չեզոք ու սառնասիրտ գտնվել՝ զերծ մնալով նմանաբնույթ հայտարարություններից՝ այդկերպ ցույց տալով, որ ԱՄՆ-ն Հայաստանի հետ կապված ինչ-որ շահագրգռություններ ունի:

- Իհարկե, Վենսի հայտարարությունն ուղիղ միջամտություն էր Հայաստանի ներքին գործերին, բայց ես այդտեղ չեմ տեսնում որեւէ տարօրինակ բան: Վենսը, պարզ ասած, եկել էր այն արդյունքների հետեւից, որոնք այս իշխանություններն արդեն ութ տարի շարունակ հետեւողականորեն իրականացնում են: Այն է՝ Ռուսաստանին փորձում են դուրս մղել Հարավային Կովկասից: Իշխանությունները դրանով զբաղվում են հենց իշխանության գալու առաջին իսկ օրվանից, իսկ դա հավաքական Արեւմուտքի եւ ԱՄՆ-ի համար ամենակարեւոր հարցն է: Բնականաբար, եթե նրանք ցանկանում են հարցը մինչեւ վերջ լուծել եւ իրենց նպատակը կատարել, ապա, բնականաբար, պետք է աջակցեն օրվա իշխանություններին, որպեսզի իշխանափոխություն տեղի չունենա: Նիկոլ Փաշինյանը պետք է շարունակի պաշտոնավարել: Սա ԱՄՆ-ի համար ստրատեգիական շահերից բխող հարց է: Հետեւաբար, բաց տեքստով աջակցություն են հայտնում նրան:

- Իսկ, ընդհանուր առմամբ, Վենսի՝ Հայաստան կատարած այցին ինչ գնահատական կտաք: Այն ինչպիսի՞ այց էր, ի՞նչ կարող է տալ Հայաստանին:

- Ես կարծում եմ, որ միայն այս այցով գնահատական տալն իմաստ չունի, որովհետեւ այս ամենի արդյունավետությունը կախված է այն բանից, թե ինչպիսին կլինեն Բաքու կատարած այցը, Ադրբեջանի հետ բանակցությունները: Պարզ եթե խոսենք՝ Վենսը եկել էր Հայաստանին ասելու, թե ինչ է առաջարկվում, երբ Թրիփի երթուղու նախապատրաստական շրջանն ավարտվի, եւ պրոցեսներն առաջ գնան դեպի գործնական փուլ: Նա եկել էր Հայաստանին առաջարկելու, թե ինչ կարող ենք ստանալ այդ ամենի դիմաց: Հիմա էլ գնում է Բաքու՝ Բաքվին առաջարկելու, թե նրանք ինչ են ստանալու այդ ամենի դիմաց: Եթե այդ առեւտուրը հաջողությամբ ավարտվի, ապա փորձ կարվի արդեն գետնի վրա սկսել նախագիծը, որը մինչ այս պահը դեռեւս թղթի վրա է, ինչից հետո էլ պարզ կդառնա, թե ինչպիսի արձագանք կտան Իրանն ու Ռուսաստանը: Եթե մինչեւ այս պահը ծրագիրը թղթի վրա էր, եւ ամեն բան արվում էր հայտարարությունների մակարդակով, հայտնի չէ, թե ինչ կլինի, եթե պրոցեսը մտնի գործնական փուլ: Ես կարծում եմ, որ ՌԴ-ի եւ Իրանի արձագանքը կարող է սպասվածից ավելի կոշտ լինել, հետեւաբար, միայն այս մեկ այցից չեմ կարող հստակ գնահատականներ տալ: Սա միայն առաջին եւ փոքր բաղադրիչն է մեծ պրոցեսի: Ամեն դեպքում, եկեք ֆիքսենք, որ ԱՄՆ-ի համար Ադրբեջանի հետ հարաբերությունները շատ ավելի կարեւոր են: ԱՄՆ-ն Բաքվին համարում է տարածաշրջանի իր միակ պարտնյորը, իսկ Հայաստանը զուտ պոտենցիալ խոչընդոտող հանգամանք է, այդ պատճառով եկել են գին առաջարկելու, որպեսզի Հայաստանը հանկարծ խոչընդոտ չհանդիսանա:

- Որքան էլ որ տարօրինակ թվա, Վենսը Հայաստանում անտեսելով հայ ռազմագերիների եւ քաղաքական բանտարկյալների հարցը՝ խոսել է Իրանի քաղաքական բանտարկյալների մասին: Ինչո՞ւ, ի՞նչ է սա նշանակում:

- Հասկանալի է, որ նրան ուղեկցող խմբում ներառված են մեծաթիվ լրագրողներ, բնականաբար, նա հայտարարություններ է անում լրատվամիջոցների համար, ինչ վերաբերում է հայաստանյան քաղաքական բանտարկյալներին, ապա նա չխոսեց այդ մասին, քանի որ Փաշինյանի իշխանությունը դա ներկայացրել է որպես Հայաստանի դեմ ՌԴ-ի կողմից իրականացվող իբր հիբրիդային պատերազմի արդյունք, իսկ ԱՄՆ-ին ձեռնտու է, որ ՌԴ-ի կողմից հայտարարված պատերազմում Հայաստանը հաղթի, այլ կերպ ասած՝ ԱՄՆ-ին նաեւ ձեռնտու է ներկայացնել, որ Հայաստանում ամեն բան կարգին է, չկան խնդիրներ, որովհետեւ նրանց ձեռնտու է Նիկոլ Փաշինյանի վերարտադրությունը: Հայտնի արտահայտություն կա՝ շան որդի է, բայց մեր շան որդին է, հիմա, տվյալ դեպքում, ԱՄՆ-ին բոլորովին չեն հետաքրքրում Հայաստանի եւ Հայաստանի նման երկրների ներքաղաքական վիճակը, քաղաքական բանտարկյալները, մարդու իրավունքներն ու խոսքի ազատությունը: Նրանց հետաքրքրում է, թե տվյալ երկիրն ինչպիսի քաղաքականություն է վարում, դե իսկ Հայաստանը վարում է իրենց համար ձեռնտու քաղաքականություն: Այդ պատճառով էլ աչք են փակելու բոլոր այն երեւույթների վրա, որոնք դատապարտելի են, իսկ եթե նրանց ձեռնտու չլիներ օրվա իշխանության վարած քաղաքականությունը, ապա անգամ շատ ավելի փոքր, չնչին խախտումները կուռճացնեին, կդարձնեին մի մեծ պատմություն, ճնշում գործադրելու միջոց:

- Ակնհայտ է, որ Վենսը Ծիծեռնակաբերդի հուշահամալիր իշխանությունների հորդորով չէ, որ այցելեց: Ո՞րն էր այդ այցի նպատակը:

- Սովորական արարողակարգ էր: Վստահ եմ՝ Բաքվում նույնպես նման հարգանքի տուրք մատուցելու է: Եթե նա չայցելեր Ծիծեռնակաբերդ, հայ հանրության աչքում վատ կընկալվեր: Եկեք չմոռանանք նաեւ, որ, ի վերջո, ԱՄՆ-ն ճանաչել է Հայոց ցեղասպանությունը: Այժմ ԱՄՆ-ի համար կարեւոր է, որ հայ հանրությունն իրեն ընկալի որպես հայամետ երկիր: Իզուր չէ, որ Վենսը հայտարարեց այն մասին, որ Հայաստանն ամենահին քրիստոնյա երկրներից է եւ այլն: Այս քայլերը դրական երեւալու համար են:

- Երեկվանից նաեւ 9 միլիարդի ներդրումների մասին է խոսվում: Ոմանք պնդում են, որ ԱՄՆ-ն 9 միլիարդի ներդրումներ է կատարելու, իսկ շատերն էլ պնդում են, որ որեւէ լումա չի ներդրվելու Հայաստանում: Հետաքրքրականն այն է, որ բոլորը Վենսի ուղիղ խոսքն են վկայակոչում, սակայն այդպես էլ չի հասկացվում, թե որն է իրականությունը:

- Խոսքը, բնականաբար, այն ներդրումների մասին չէ, որը մեր հանրությունը հասկացել է: Նրանց ասածն այն է, որ Հայաստանին իրավունք են տալիս ԱՄՆ-ից գնելու տեխնիկա՝ միջուկային անվտանգության ոլորտում: Ինչո՞ւ են այն ներդրում համարում, քանի որ այլ երկրների դա թույլ չեն տալիս, իսկ Հայաստանին թույլ են տալիս: Այդ իմաստով Հայաստանին բոնուս են տալիս ընդամենը: Օրինակ, եթե Եմենը նման ցանկություն հայտնի, Ամերիկան դա թույլ չի տա, սակայն Հայաստանին թույլ է տալիս՝ պրոցեսը ներկայացնելով որպես հայ-ամերիկյան ռազմավարական ներդրում: Նյութական, ֆինանսական ներդրման մասին խոսք չկա, եւ, իհարկե, իրականում խոսքը ներդրման մասին չէ:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՋԱՓՆՅԱԿԻ ՄԵՏՐՈՆ ՀՈՐՈՎ-ՄՈՐՈՎ ԱՐԵՑԻՆ, ԱՆՑԵԼ ԵՆ ԴԻԼԻՋԱՆԻ ԹՈՒՆԵԼԻՆ

Գերմանիայի կանցլեր Բիսմարկն ասել է. «Երբեք այնքան շատ չեն ստում, որքան պատերազմի ընթացքում, որսորդությունից հետո եւ ընտրություններից առաջ»: Հունիսի 7-ին տեղի կունենան ԱԺ հերթական ընտրությունները, արդեն իսկ իշխանության կողմից ստի մեծ չափաքանակ է շրջանառվում երկրում: 2021թվականի նախընտրական խոստումները դրժած, սակայն 2026-ի ընտրություններով վերարտադրվելու նպատակ ունեցող իշխանությունն ընտրողների քվեները շահելու համար առաջնորդվում է ֆաշիստական Գերմանիայի պրոպագանդայի մինիստր Գեբելսի սկզբունքով՝ որքան մեծ է սուտը, այնքան դրան հեշտ են հավատում: Այդ մեծ ստերից է նաեւ Դիլիջան-Սեւան ավտոմոբիլային նոր թունելի կառուցման խոստումը: «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամը հայտնում է. «Փետրվարի 6-ին Սեւան քաղաքում տեղի է ունեցել հանրային քննարկում՝ Դիլիջանի նոր թունելի կառուցման նպատակով հողերի օտարման եւ տարաբնակեցման հարցերի վերաբերյալ: Մասնակցում էին Գեղարքունիքի մարզպետարանի, Սեւանի համայնքապետարանի աշխատակիցներ, քաղաքացիներ: Խորհրդատու կազմակերպությունների ներկայացուցիչները հանդիպման մասնակիցներին ծանոթացրել են բոլոր այն գործընթացներին, որոնց հետ առնչվելու են ազդակիր անձինք՝ հողերի օտարման եւ տարաբնակեցման ծրագրի շրջանակներում: Մասնավորապես, ներկայացվել են փոխհատուցում ստանալու իրավունքները, բողոքների լուծման մեխանիզմները եւ բազմաթիվ այլ թեմաներ: Խորհրդատու կազմակերպությունների մասնագետները պատասխանել են նաեւ հանդիպման մասնակիցների հարցերին, որոնք հիմնականում վերաբերում էին օտարման ենթակա հողերի, ծառերի, մշակաբույսերի, շենք-շինությունների գնահատման մեխանիզմներին»: Դիլիջանի համայնքապետարանն էլ տեղեկացնում է. «Փետրվարի 24-ին, ժամը 12:00-ին Դիլիջանի համայնքապետարանի նիստերի դահլիճում կկայանա հանրային քննարկում՝ Դիլիջանի նոր թունելի կառուցման աշխատանքների շրջանակում «Բնապահպանական ազդեցության գնահատման» հաշվետվության վերաբերյալ, որը մշակվել է ԱԶԲ-ի պահանջների համաձայն: Ծրագրի պատվիրատուն «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամն է»:

Դիլիջանի նոր թունելի կառուցման վերաբերյալ առայժմ քննարկումներ են ընթանում, իսկ Դիլիջանի գործող թունելը երկար տարիների մեծ ծախսերի եւ մեծ աշխատանքի արդյունք է: Այդ թունելի շինարարությունը սկսվել է ԽՍՀՄ օրոք՝ 1970 թվականին, բայց 1992 թվականին ֆինանսավորման բացակայության պատճառով այն դադարեցվել է: Վերսկսված շինարարությունը ֆինանսավորել է «Լինսի հիմնադրամը»՝ այդ նպատակով հատկացնելով 6,7 միլիոն դոլար: 2257 մետր երկարությամբ, 8 մետր լայնությամբ, 5 մետր բարձրությամբ թունելը հանդիսավորությամբ բացվել եւ շահագործման է հանձնվել 2004թ. հունիսի 4-ին: Թունելի շինարարության կառուցման 2-րդ փուլում արտակարգ պատահարների հետեւանքով 2 բանվոր է զոհվել: Նոր թունելի շինարարության հետ կապված՝ բազում հարցեր են առաջանում՝ ո՞ւմ ֆինանսավորմամբ, որքա՞ն է արժենալու այն, ե՞րբ է հայտարարվելու նոր թունելի շինարարության մրցույթը, քանի՞ տարի է նախատեսված շինարարության համար: Այս հարցերի պատասխանները ստանալու համար զանգահարեցի «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ, որտեղից առաջարկեցին հարցերը գրավոր ուղարկել, ինչը կանեմ՝ ակնկալելով մանրակրկիտ պատասխաններ:

Նկատենք, որ այս իշխանությունը մեծ-մեծ խոստումներ տալու, գրանդիոզ պլաններ մշակելու մեծ մասնագետ է. ակադեմիական քաղաքը, մետրոյի Աջափնյակի կայարանը հորով-մորով արեցին, հիմա անցել են Դիլիջանի նոր թունելի շինարարությանը: ՔՊ-ական իշխանության գրեթե 8 տարում շինարարական ոչ մեծ, ոչ էլ նույնիսկ միջին մեծության ծրագիր չեն իրականացրել, առավել եւս՝ բարդ կառույց հանդիսացող այդ ավտոմոբիլային թունելի շինարարությունը ո՞նց են իրականացնելու: Թող գնան Վրաստան եւ տեսնեն, թե վերջին տարիներին ինչքան ավտոմոբիլային թունելներ, մեծ կամուրջներ ու ճանապարհներ են գործարկել, եւ այդ ամենը՝ սուսուփուս, առանց թմբկահարելու:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

Տնային կալանքից ազատվել է եւ գնացել Ծաղկաձոր

Նախորդ տարվա սեպտեմբերի 2-ին՝ կեսգիշերին մոտ, «ռազբորկա» էր տեղի ունեցել Գորիսի կենտրոնում. մի խումբ երիտասարդներ մահակներով ծեծի էին ենթարկել հորը եւ որդուն, հնչել էին կրակոցներ: Պատահարի հիմքում աղջկա թեմա էր: Ծեծողների մեջ էր նաեւ Տեղ համայնքի ՔՊ-ական ղեկավար Դավիթ Ղուլունցի եղբորորդին՝ Արման Ղուլունցը, նաեւ՝ քրոջ որդին: Մենք գրել էինք, որ միջադեպից հետո ձերբակալված չկա, որոնողական աշխատանքներ էին ընթանում՝ մեղավորներին հայտնաբերելու ուղղությամբ: Դեպքից անցել է մոտ կես տարի, մեզ Գորիսից տեղեկություններ են փոխանցում՝ Արման Ղուլունցը մի քանի ամիս տնային կալանքի տակ է եղել, վերջերս փոխվել է նրա խափանման միջոցը, եւ, ըստ լուրերի, նա այժմ Ծաղկաձորում հանգստանում է: «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգից այս գործի մասին շատ սուղ ինֆորմացիա ենք ստանում: Միայն հայտնի է, որ գործով 5 անձ ունի մեղադրյալի կարգավիճակ, նրանց՝ բոլորին մեղադրանք է առաջադրված խուլիգանության հատկանիշով, բացառությամբ Ջոն Գյուրջյանի, որին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա մի խումբ անձանց հետ կատարել է «զենքի եւ մարմնական վնասվածք պատճառելու համար հարմարեցված առարկայի գործադրմամբ խուլիգանություն», ինչպես նաեւ՝ ծանր հանցագործության վերաբերյալ քննվող քրեական վարույթով ներկայացրել է կեղծ ապացույց: 5 մեղադրյալից 3-ի նկատմամբ կիրառվել է գրավը որպես խափանման միջոց, 2-ի նկատմամբ՝ բացակայելու արգելքը:

Ծեծուջարդ իրականացրած, կրակոցներ արձակած ՔՊ-ականի եղբորորդուն «խուլիգանության» մեղադրանք են առաջադրել, ինչը բավականին մեղմ հոդված է՝ կատարված արարքի համար: Հերթական անգամ տեսնում ենք ընտրովի արդարադատության օրինակ: Ստացվում է, որ կարելի է հրապարակային կարգով մահակներով մարդ ծեծել, կրակել, բայց մնալ ազատության մեջ եւ մի մեղմ հոդվածով մեղադրվել, իսկ, օրինակ, Արշակ սրբազանի դեպքում՝ առանց հիմնավորման եւ ապացույցի ամիսներ շարունակ պահում են բանտում՝ մարիխուանայի մի կեղծ գործով: Վերը նշված դատական գործը Գորիսի դատարանի դատավոր Գոռ Գասպարյանի վարույթում է:

Անանա ՊԱՊԻԿՅԱՆ

ԷՆԵՐԳԵՏԻԿ

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ՝ ՄԻ՞Ֆ, ԹԵ՞ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Միացյալ Նահանգների փոխնախագահի՝ Հայաստան կատարած այցի շրջանակներում տպավորություն ստեղծվեց, թե միջուկային համագործակցության շրջանակներում Միացյալ Նահանգները պատրաստվում է միլիարդավոր դոլարներ ներդնել Հայաստանում: Ջեյ Դի Վենսի հնչեցրած հայտարարությունը՝ ներդրումների վերաբերյալ, անկառավարելի ոգեւորություն է առաջացրել իշխանական քարոզիչների, արեւմտամետների շրջանում:

«Սկզբնական մոտ 5 միլիարդ դոլար ներդրումների մասին ենք խոսում, հետագայում, 2-րդ փուլում՝ եւս 4 միլիարդ: Սա փոխշահավետ իրավիճակ է եւ Հայաստանի համար, եւ իմ երկրի համար՝ էներգետիկ անվտանգության, էներգետիկ կայունության: Նաեւ ստեղծելու է շատ աշխատատեղեր եւ ԱՄՆ-ում, եւ Հայաստանում: Սա նշանակում է փոքր մոդուլյար ռեակտորներ, այսինքն՝ ամերիկյան տեխնոլոգիաները գալու են այս երկիր»,- Հայաստանում հայտարարեց ԱՄՆ փոխնախագահ Ջեյ Դի Վենսը:

Հենց այս հայտարարությունն է, որ շատերի մոտ տպավորություն է ստեղծել, թե Միացյալ Նահանգները պատրաստվում է մեծ ներդրումներ կատարել Հայաստանում: Բայց իրականում խոսքը ոչ թե ֆինանսական, այլ տեխնոլոգիական ներդրումների մասին է, որը կարող է իրականացվել Հայաստանում՝ ամերիկյան մոդելով մոդուլային միջուկային ռեակտորի կառուցման պարագայում: Եթե ավելի պարզ, ապա այն, ինչի մասին խոսում է Վենսը, իրականում ներդրում է ոչ թե Հայաստանի, այլ ԱՄՆ տնտեսության մեջ: Հայտնի է, որ Մեծամորի ատոմակայանի կյանքը երկար չէ, եւ այն պետք է փոխարինվի նոր ատոմային կայանով: Նման կայան կառուցելու առաջարկ արել է Ռուսաստանը, իսկ ԱՄՆ-ն առաջարկում է փոքր մոդուլային ռեակտոր տեղադրել Հայաստանում: 5 մլրդ դոլարն այդ ռեակտորի կամ ռեակտորների արժեքն է, որոնք պետք է արտադրվեն ԱՄՆ-ում ու տեղադրվեն Հայաստանում: Մնացած 4 միլիարդը սպասարկման ու միջուկային վառելիքով լիցքավորման ծախսերն են, որոնք, ի դեպ, հնարավոր է կյանքի կոչվեն երկարաժամկետ հատվածում: Ահա այն ամենը, ինչ պետք է իմանալ ամերիկյան խոշոր ներդրումների մասին, որը միտումնավոր խեղաթյուրում ու տարածում են իշխանականները, նրանց քարոզչամեքենան՝ փոխարենը ջրելով այն թեման, որ սա շատ ավելի թանկ տարբերակ է, քան ռուսականը, եւ փոքր մոդուլային կայանների քողի տակ իրականում թուրք-ադրբեջանական եւս մեկ պահանջ է կատարվում՝ փակում են մեծ ատոմակայանը, որն անհրաժեշտության դեպքում կարող էր նաեւ անվտանգային նշանակություն ունենալ եւ մեր թշնամիներին զսպող դեր խաղալ: Այս ճանապարհով Հայաստանին նաեւ փորձում են էներգետիկ կախվածության մեջ գցել, աշխարհում դեռեւս լայն կիրառում չունեցող եւ նվազագույն արդյունավետություն ունեցող մոդուլային ատոմակայանների համար փորձարկման պոլիգոն դարձնել:

Երեկ Հայաստանի խորհրդարանի խոսնակ Ալեն Սիմոնյանը շարունակեց ՔՊ-ի ստի հաղթարշավը եւ իր ճեպազրույցում ազգին շնորհավորեց «պատմական պայմանավորվածությունների եւ այն հնարավորությունների առթիվ, որոնք բացվում են» ԱՄՆ փոխնախագահի՝ Երեւան կատարած այցի շնորհիվ: Պատասխանելով հարցին, թե ի վերջո Վենսը խոստացե՞լ է ներդրումներ, թե՝ ոչ, Սիմոնյանը հորդորեց բոլոր կարեւոր հարցերում՝ լինի դա անվտանգություն, խոշոր ներդրումներ, թե աշխարհաքաղաքական գործընթացներ, հիմնվել պետական լրատվամիջոցների տեղեկատվության եւ հայտարարությունների վրա: Մնացածը, նրա խոսքով, հեքիաթներ են, թեպետ իրականում հենց պետական լրատվամիջոցներն էին «ներդրումների» մասին հեքիաթները տարածում:

Մինչդեռ ընդդիմադիր պատգամավոր **Արթուր Խաչատրյանն** ուշադրություն հրավիրեց, որ Պետդեպարտամենտի կայքում հրապարակված տարբերակում անգամ «ներդրումներ» բառը բացակայում է: Խաչատրյանը նաեւ ընդգծեց, որ գործող իշխանությունները հավատարիմ են իրենց զեղծարար գործելաոճին: «Չմոռանանք, որ օգոստոսի 8-ի թուղթը, որը ստորագրվել էր, երկկողմանի համատեղ հռչակագիր էր Ալիեւի եւ Փաշինյանի միջեւ, որն արվել էր Թրամփի ներկայությամբ, բայց Փաշինյանի կայքում ներկայացնում էին, որ դա եռակողմ հռչակագիր է: Ակնհայտ է, որ փորձում էին խաբել, նման սխալ պատահական չի լինում, թարգմանության այդպիսի սխալ չի լինում: Բայց մի բան է եռակողմ հռչակագիրը, մի բան է երկկողմ հռչակագիրը: Նույնը տեղի ունեցավ երեկ՝ «ներդրումներ» բառի հետ կապված, Վենսը «ներդրում» բառ չի ասել, մինչդեռ մեր որոշ հայրենակիցներ անտեղեկությունից վարդագույն օպտիմիզմով են համակվել, որ հեսա-հեսա՝ Միացյալ Նահանգները 9 միլիարդի ներդրում կկատարի, ոմանք նույնիսկ առաջ են գնացել, ասում են՝ 9 միլիարդի օգնություն կստանանք, անգամ չեմ զարմանա, որ բաժանում են 3 միլիոնի, ասում են՝ ամեն մեկին 1,7 միլիոն փող է գալիս: Խոսքը գնում էր էներգետիկ ոլորտում առեւտրի մասին, այսինքն, 5 միլիարդի առեւտրի պոտենցիալ կա՝ հիմնական էներգետիկ բնագավառում, եւս 4 միլիարդը՝ վառելիքի գնման, սպասարկման ոլորտում, որովհետեւ ակնհայտ է, որ եթե ատոմակայան է կառուցվում, այդ վառելիքը պետք է գնվի, պետք է օգտագործվի»,- ասաց Խաչատրյանը:

Պատգամավորն անդրադարձավ նաեւ, թե Հայաստանը հետախուզական դրոններ է գնել ԱՄՆ-ից, բայց շեշտեց, որ ԱՄՆ-ն ռազմական ահռելի աջակցություն է ցուցաբերում Ադրբեջանին. «Այստեղ մենք պարիտետը չենք տեսնում, Վենսի՝ Բաքու կատարած այցից հետո ավելի պարզ կդառնա»:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ԿՈՌՈՒՊՑԻԱՆ ԱՎԵԼԱՆՈՒՄ Է, ԻՍԿ ԿՈՄԻՏԵՆ ԶԲԱՂՎԱԾ Է ԻՆՔՆԱԳՈՎԵՍՏՈՎ

Հակակոռուպցիոն կոմիտեում 2025 թվականի արդյունքներն են ամփոփել կոլեգիայի նիստում եւ որոշել, որ իրենք շատ լավ են աշխատել, ուստի իրենք իրենց պարգեւատրել են, մեդալներ ու դասային աստիճաններ շնորհել: Հետաքրքիր անվանակարգեր են հորինել՝ «Լավագույն ստորաբաժանում», որը, իհարկե, սեփականության դեմ ուղղված կոռուպցիոն հանցագործությունների վարչությունն է եւ օպերվարչությունը, լավագույն քննիչ, լավագույն ծառայող: Կոմիտեի նախագահ Արթուր Նահապետյանը, որպես առաջընթացի վկայություն, նշել է դատարան ուղարկված վարույթների քանակական աճը, պետությանը պատճառված վնասի վերականգնումը, պատմել է թե առաջիկայում ոնց են հերոսաբար ուժեղացնելու այդ գործիքակազմը, ֆինանսական հոսքերի, գույքային շարժի եւ ապօրինի հարստացման ու շահերի բախման դեպքերի բացահայտման մեխանիզմներն են կատարելագործելու, քննության որակ ու հսկողություն են բարձրացնելու եւ այլն՝ ոչ մի նոր բան:

Տպավորություն է, թե պարոն Նահապետյանը չի կարդացել Freedom House հեղինակավոր իրավապաշտպան կազմակերպության վերջերս հրապարակած «Freedom in the World 2025» զեկույցում Հայաստանի վերաբերյալ հնչեցրած գնահատականները, մասնավորապես այն, որ հակակոռուպցիոն հռչակված քաղաքականության ֆոնին կոռուպցիոն ռիսկերը Հայաստանում պահպանվում են, իսկ որոշ ոլորտներում՝ խորանում: Ի դեպ, զեկույցում Արթուր Նահապետյանի ղեկավարած կառույցի մասին առանձին գնահատական էլ կա: Գրված է հակակոռուպցիոն մարմինների «ինստիտուցիոնալ խոցելիության» մասին, որ հակակոռուպցիոն համակարգը Հայաստանում ինքն է դարձել կոռուպիոն ռիսկերի աղբյուր, որ իշխող կուսակցության բարձրաստիճան պաշտոնյաները հազվադեպ են ենթարկվում իրական քննության, «նույնիսկ այն դեպքերում, երբ առկա են պաշտոնեական լիազորությունների չարաշահման ակնհայտ ցուցումներ, կոռուպցիոն գործերով հաջողված դատապարտումները վերին էշելոններում մնում են բացառիկ, ոչ թե կանոն»:

Պարոն Նահապետյանը նաեւ չի հետեւեում Transparency International կազմակերպության հրապարակումներին: Այլապես կկարդար ու կամաչեր գովաբանել իր կառույցը եւ պարգեւատրումներ տալ ինքն իրեն: Ըստ հրապարակման՝ Հայաստանի կոռուպցիայի ընկալման համաթիվը հակակոռուպցիոն «գովաբանումների» ժամանակահատվածում՝ 2025-ին 2024-ի համեմատ նվազել է մեկ միավորով՝ իջնելով 46 միավորի՝ հայտարարել է «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ» հակակոռուպցիոն կենտրոնը: Ըստ Transparency International-ի հրապարակման, Հայաստանի կոռուպցիայի ընկալման համաթիվը (ԿԸՀ) գերազանցում է հարեւան երկրների եւ ԵԱՏՄ մյուս երկրների 2025-ի ԿԸՀ արժեքները, բացի Վրաստանից: 2023 եւ 2024 թվականներին այդ թիվը Հայաստանի համար անփոփոխ է մնացել է 47 միավոր: Այն, որ համաթիվն իջել է, լավ չի: Սովորաբար բարձր միավորը նշանակում է քիչ կոռուպցիա, ցածրը հավասար է կոռուպցիայի ավելի բարձր աստիճանի: Այսինքն՝ եթե ցուցանիշն իջնում է, նշանակում է, որ երկրում կոռուպցիան ավելացել է, եւ հանրությունն էլ գիտի դրա մասին: Հիշեցնենք, որ, ըստ Հայաստանի իշխանությունների, մեր երկրում համակարգային կոռուպցիա չկա, համակարգային կոռուպցիան իրենք արմատախիլ են արել երկրից:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ՕՐԵՆՔ

16-17 ՏԱՐԵԿԱՆԻՆ ՀԵՇՏՈՒԹՅԱՄԲ ԿԱՐԵԼԻ Է ԳՑԵԼ ՄՈԼՈՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ, ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱԿ

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հշխանությունները, նրանց սպասարկող արբանյակները, սովորության համաձայն, «մեկ նալին են խփում, մեկ՝ մեխին»: Օրեր առաջ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը, խոսելով անչափահասների՝ համացանցից օգտվելու վնասակարության մասին, ասել է. «Մինչեւ 16 տարեկան երեխաների մուտքը սոցիալական ցանցեր կարող է օրենքով արգելվել: Հարցը քննարկվում է բարձրտեխնոլոգիական արդյունաբերության նախարարության հետ»: «Որովհետեւ որքան կարեւոր է տեխնոլոգիաների օգտագործումը, այնքան էլ անհրաժեշտ է ապահովել երեխաների պաշտպանվածությունը: Մեդիագրագիտություն սովորեցնելուն զուգահեռ, պետք է նաեւ բարձրացնենք նրանց անվտանգությունն ու պաշտպանվածությունը կիբերտարածքում: Այսօր դա շատ լուրջ խնդիր է, որի շուրջ մենք միասին աշխատում ենք, եւ առաջիկայում՝ մեր գործընկերների աջակցությամբ, կարծում եմ, համապատասխան օրենսդրական փաթեթ կլինի»,- ասել է նախարարը:

Այս ամենին զուգահեռ՝ ՔՊ-ի կցորդ, իշխանական օրենսդիր, Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի անդամ Դանիել Իոանննիսյանն օրերս հայտարարել է, որ պետք է ընտրողների տարիքային ցենզն իջեցնել՝ 18 տարեկանի փոխարեն դարձնելով 17 կամ 16: Ստացվում է, որ մի տեղ անչափահասը՝ 16-17 տարեկանը, այնքան անգիտակից է ու որպես անհատականություն չի ձեւավորվել, որ անգամ համացանց մուտք գործելու իրավունք չունի, մյուս կողմից՝ այնքան գիտակից, հասուն, կայուն եւ գաղափարական է, որ կարող է ընտրություններին մասնակցել, երկրի ապագան որոշել, վճռորոշ դեր խաղալ որպես քաղաքացի եւ այլն:

Կրթության փորձագետ **Ատոմ Մխիթարյանը**, «Հրապարակի» հետ խոսելով մինչեւ 16 տարեկան դեռահասներին համացանց մուտք գործելու սահմանափակումների մասին, նկատեց. «Ամբողջ աշխարհում կա միտում, որ այն երեխաները, ովքեր հասուն չեն, չեն կարող լիարժեք օգտվել սոցցանցերից, այսինքն՝ փորձում են դժվարացնել պրոցեսը, կամ, ասենք, օրինակ, առավոտյան ժամերին, երբ դասապրոցես է ընթանում, արգելափակել սոցկայքերի հասանելիությունը, որպեսզի երեխան կենտրոնանա դասապրոցեսի վրա: Օրինակ՝ Ավստրալիայում վերջերս նման օրենք ընդունվեց, տարբեր երկրներ տարբեր օրենսդրական լուծումներ են գտնում այս հարցի վերաբերյալ, սակայն, ամեն դեպքում, այս բոլոր պրոցեսները պետք է համաձայնեցնել սոցիալական հարթակների հետ: Այնպես չէ, որ ԿԳՄՍ նախարարը որոշեց, ու օրենք ընդունվեց, դրանով ամեն հարց լուծվելու է: Ոչ: Օրինակ՝ Ավստրալիան դիմեց Ֆեյսբուքին, որպեսզի Ֆեյսբուքը տա համապատասխան գործիքներ, ինչի արդյունքում 13-14 տարեկան երեխաները չկարողանան իրենց անունով օգտահաշիվ բացել, կամ եթե, օրինակ, ուրիշի անունով ունենա, արգելափակեն եւ այլն: Այն բավականին երկարատեւ պրոցես է, եւ աշխարհը գնում է այդ ուղղությամբ: Կան հետազոտություններ, որոնց համաձայն՝ սոցիալական ցանցերն ազդում են կրթության որակի վրա, ինչը մենք տեսնում ենք նաեւ Հայաստանում: Ես կարծում եմ, որ մենք եւս պետք է այդ ուղղությամբ գնանք, սակայն՝ խելացի եղանակով, այլ ոչ թե ուղղակի քննարկումների մակարդակով: Ես անգամ չգիտեմ, թե ԿԳՄՍ նախարարությունը, խոսելով համացանցի մասին, կոնկրետ որ սոցիարթակները նկատի ունի»:

«Հանրապետություն» կուսակցության նախկին անդամ, իրավաբան **Նորիկ Եղիազարյանը**, որն Ընտրական օրենսգրքից քաջատեղյակ մեկն է, մեզ հետ զրույցում խոսելով Դանիել Իոանննիսյանի առաջարկի մասին, որ ընտրողների տարիքային ցենզը պետք է իջեցնել՝ դարձնելով 16-17 տարեկան, ասաց. «Դա աննորմալություն կլինի, ինչպե՞ս կարելի է նման առաջարկություն անել: Աշխարհում ընդունված բան է, որ ընտրողի նվազագույն տարիքը պետք է լինի 18-ը: Իմ իմացած բոլոր երկրներում, համենայնդեպս, այդպես է: 16 տարեկանը ոչ լիարժեք պատասխանատվության ենթակա սուբյեկտ է հանդիսանում, ըստ Քրեական օրենսգրքի՝ 16 տարեկան անձը համարվում է պատասխանատվություն կրող, սակայն մի շարք հանցագործությունների պարագայում պատիժը մեղմ է նախատեսվում կամ, առհասարակ՝ պատիժ չի սահմանվում: Այնպես որ, անձը լիարժեք քաղաքացի է դառնում 18 տարեկանից սկսած: Մինչեւ 18 տարին լրացած անձը անգամ ինքնուրույն չէ, ունենում է խնամակալներ, այսինքն՝ լիիրավ քաղաքացի անձը դառնում է 18-ից հետո: 16-17 տարեկանը չի կարող հասնել հասունության այն աստիճանին, որ լիարժեք կարողանա գիտակցել, թե ինչ բան է ընտրությունը: Նրանց շատ հեշտ կարելի է գցել մոլորության մեջ, ազդեցությունների տակ, ասեմ ավելին՝ անգամ 18-19 տարեկաններն են վտանգավոր այս հարցում»:

ԱԶԱՏԱՇԵՆԸ՝ ՓՈՔՐԻԿ ՎԵՆԵՏԻԿ, ԲԱՅՑ ՋՐԻ ՓՈԽԱՐԵՆ ՑԵԽ Է

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

Ասիս խոշորացված համայնքի Ազատաշեն բնակավայրի փողոցներում ամեն առավոտ նույն կինոն է՝ «Ցեխապատում» վերնագրով: Փոխվում են միայն գործող անձինք: Մեկ երեխաների կոշիկներն են մնում առատ ցեխաջրում թաղված, մեկ աշխատանքի շտապող աշխատողներն են հայտնվում հիմար վիճակում ու ոտքից գլուխ կուսական ցեխով պատված՝ տուն են դառնում, որ շորերը փոխեն: Ասֆալտն այստեղ կպչուն միտք է, երազանք, կարծես Ազատաշենի մասին է ասել Նիկոլը՝ «ասֆալտը ասֆալտ ա»:

Ազատաշենի կենտրոնական փողոցին հարող 2-րդ, 6-րդ, 11-րդ փողոցները միայն անունով են փողոց: «Այն ճանապարհը, որով ես պետք է դուրս գամ դեպի գլխավոր փողոց, անանցանելի է: Խայտառակ վիճակ է: Անգամ տաքսի չենք կարողանում կանչել»,- գանգատվում է բնակիչներից մեկը: Տաքսիստները, նրա բառերով, գալիս են, տեսնում են «փողոցի բերանի» խոր ցեխաճահիճը, գնում են հետ: Նավեր էլ գյուղում չկան:

Աշնանը համայնքապետարանից, Ազատաշենի վարչական ղեկավարը խոսք են տվել համագյուղացիներին, որ եթե ջրի «տռուբաները» փոխեն, կբերեն, փողոցն «արագի մեջ» կասֆալտապատեն: Մարդիկ «տռուբաները» փոխել են ու մնացել սպասող:

Ջրագիծն Ազատաշենում մեկ այլ կինո է: Ջրագծեր փոխելու սուբվենցիոն ծրագիր կա համայնքում, բայց, չգիտես ինչու, բնակիչներին են ստիպել, որ ամեն մեկն իր տուն մտնող ջրագիծը փոխի: «Գյուղապետն ասել ա, որ տենդեր ենք շահել, բայց քանի որ խողովակները հին են, ու պայթելու վտանգը մեծ է, իսկ «Վեոլիա ջուրը» դրանով չի զբաղվում, դուք փոխեք տռուբեքը, որ բերենք՝ ասֆալտենք: Ամեն մեկն իր տան դիմացի ջրի խողովակը փոխեց, ու վերջ: Էլ ո՛չ եկան, ո՛չ ասֆալտապատեցին»,- պատմում են մի խումբ ազատաշենցիներ՝ խնդրելով իրենց անունները չհրապարակել: «Թող լուծում տան էս հարցին, մենք ինչքա՞ն ապրենք ցեխերի մեջ»,- հարցնում են մեզ դիմողները: Շուտով անձրեւներ են սկսվելու Ազատաշենում, Ազատաշենը «Տիտանիկ» է դառնալու, իրենք էլ խորտակվելու են, գնան:

Զանգահարեցինք Ազատաշեն բնակավայրի վարչական ղեկավար Սարգիս Ստեփանյանին, որն ասաց, որ ասֆալտի կարիք կա միայն 2-րդ եւ 6-րդ փողոցներում, որը գնում է դեպի դպրոց: Բայց նրան լսելուց հարցերը շատացան: «Ջրագիծ ենք փոխել: Պետք է ասֆալտապատեին սուբվենցիոն ծրագրով, ձգվեց: Այս ամսվա վերջ երեւի կլինի ասֆալտը»,- խոստացավ նա: Ո՞վ է ջրագիծ փոխել, ո՞ր կազմակերպությունն է շահել մրցույթը, բա ինչո՞ւ են բնակիչները՝ ամեն մեկը 50 հազար դրել, իրենց ջրագիծը սարքել, եթե ջրագիծ փոխելու սուբվենցիոն ծրագիր կա: Բայց վարչական ղեկավարն ասաց, որ չի տիրապետում տեղեկատվության, խորհուրդ տվեց դիմել Քոչարին՝ Մասիսի համայնքապետարանից:

Համայնքապետարանի Քոչարը՝ գնումների բաժնի պետ **Քոչար Խաչատրյանը** զարմացավ, որ բնակիչներն են 50 հազար դրել ու ջրագիծ փոխել: «Ո՞վ է հավաքել էդ փողը, ո՞վ է ասել նման բան, մեզ մոտ այդպիսի պրակտիկա չկա, առաջին անգամ Ձեզնից եմ լսում»,- ասաց նա: Վարչական ղեկավարին էլ հերքեց. իհարկե, ամսվա վերջին ոչ մի ասֆալտ էլ չի լինի: «Մինչեւ ամսվա վերջը տրամաբանական չէ, որ դա իրականացնենք, քանի որ եղանակային պայմանները բարենպաստ չեն»,- ասաց նա: Բայց վարչական ղեկավարն ասաց: «Մենք չենք անում ուղղակի անելու, մարդկանց բերանը փակելու համար: Այս եղանակին չի կարող լինել ասֆալտապատում: Թող սպասեն մարդիկ: Եկեք ռեալ նայենք, ցեխին չի կարելի ասֆալտ անել: Գարնանն Ազատաշենում կունենանք ասֆալտ, բայց ոչ ձմռանը»,- ասաց նա:

Բայց մարդիկ այլեւս չեն կարողանում ոտքերը դնել ցեխի մեջ, օդով են ման գալիս, էլ ինչքա՞ն սպասեն: Քոչար Խաչատրյանը վստահեցրեց, որ ինքն այդ մարդկանց հասկանում է, ինքն էլ է ցեխի մեջ մեծացել: «Ես Այնթապից եմ, 40 տարի ցեխերով եմ գնացել-եկել, ես այդ մարդկանց հասկանում եմ, ինչո՞ւ դժգոհության ալիքը հիմա սկսեցին բարձրացնել: 40 տարի չէին դժգոհում, հիմա՞ սկսեցին դժգոհել: Գարնանը լինելու է, բայց կոնկրետ օր չեմ կարող ասել»: Քոչար Խաչատրյանն իր թղթերը նայեց ու տեսավ, որ Ազատաշենի 2-րդ եւ 11-րդ փողոցներն ասֆալտապատման ծրագրում ներառված են: 6-րդը՝ առայժմ ոչ: 6-րդ փողոցը շարունակելու է նավարկել ցեխաջրերով: Գումարի չափն էլ մոտ 50-60 մլն է:

Հիշեցնենք, որ դեռ 2019 թվականին Արարատի մարզային իշխանությունները գլուխ էին գովում, թե Ազատաշեն համայնքը սուբվենցիոն ծրագրով տենդեր է շահել: Սուբվենցիոն ծրագրով անցկացվում է 343 գծամետր երկարությամբ ոռոգման ջրագիծ՝ 14 միլիոն ՀՀ դրամ ընդհանուր արժեքով: Ի՞նչ եղավ այդ սուբվենցիոն ծրագիրը, փողն ո՞ւր է: Ո՛չ Քոչար Խաչատրյանը, ո՛չ էլ բնակավայրի վարչական ղեկավարն այս մասին ոչինչ չգիտեին: Նրանք մինչեւ խոշորացումը, այսինքն՝ 2021 թվականը, ոչ մի ինֆորմացիա չունեն:

ՍԵՂ

ԱՄԵՐԻԿԱՑԻՆԵՐԸ ՀԱՅԵՐԻՆ ԴՐԵԼ ԵՆ ԿԱՏԱՐՅԱԼ ՏԳԵՏԻ ՏԵՂ, ՈՐՈՆՔ Ո՛Չ ՀԱՇՎԵԼ ԳԻՏԵՆ, Ո՛Չ ՀԱՄԵՄԱՏԵԼ

Հայ հասարակության մի զգալի հատվածը տեւական ժամանակ տառապում էր վենսացավով՝ շուտով կգա ԱՄՆ փոխնախագահ Ջեյ Դի Վենսը եւ կլուծի մեր բոլոր խնդիրները՝ Բաքվում պահվող հայ գերիների, Հայաստանի իշխանությունների կողմից բանտեր նետված քաղկալանավորների ազատ արձակում, Հայ առաքելական եկեղեցու դեմ իշխանությունների կողմից իրականացվող արշավի կասեցում, Հայաստանի տնտեսական զարգացում եւ ներդրումներ, արդարության եւ համընդհանուր համերաշխության հաստատում, մի խոսքով՝ դրախտ կկառուցվի հենց հիմա՝ մի առանձին վերցված երկրի մասշտաբով: Վենսը եկավ, եւ դրանից միակ օգուտ ստացողը եղավ Նիկոլ Փաշինյանը, Վենսի այցը Հայաստան ինչ-որ իմաստով նախընտրական էր, նա եկել էր ասելու, որ Միացյալ Նահանգներն աջակցում է Փաշինյանի ապօրինի, հակամարդկային եւ հակահայկական իշխանությունը: «Սա այն քիչ երկրներից է, որտեղ մենք բավականաչափ վստահություն ունենք՝ այս մակարդակում ներդրումներ կատարելու, այս տեսակի տեխնոլոգիաներ ուղարկելու հարցում, եւ սա տեղի է ունենում վարչապետի ղեկավարության շնորհիվ»,- հայտարարեց Վենսը՝ հասկացնելով, որ ամերիկյան վստահությունը Հայաստանի նկատմամբ պայմանավորված է վարչապետի անձով, նրա ղեկավարության շնորհիվ: Հետեւաբար այն, ինչ նա անում է՝ տասնյակ անմեղ մարդկանց կալանավորում, արշավանք Հայ առաքելական եկեղեցու եւ նրա հոգեւորականների դեմ, Հայաստանի թուրքացում եւ ազգային ինքնության ոչնչացում, դրա հետ ԱՄՆ-ն միանգամայն համաձայն է, ձեր նամակները պահեք ձեզ:

Հայ հասարակությանը փորձում են մոլորեցնել, թե իբր ԱՄՆ նախագահը Հայաստանին խոստացել է 9 միլիարդի ներդրում Հայաստանի տնտեսության մեջ, իրականում Ջեյ Դի Վենսը պահանջել է, որ աղքատ Հայաստանը 9 միլիարդի ներդրում անի ԱՄՆ տնտեսության մեջ, որի արդյունքում աշխատատեղեր կստեղծվեն ԱՄՆ-ում: Ըստ Վենսի՝ Հայաստանը եւ ԱՄՆ-ն ավարտել են միջուկային էներգիայի խաղաղ նպատակներով օգտագործման ոլորտում ՀՀ եւ ԱՄՆ կառավարությունների միջեւ համագործակցության մասին համաձայնագրի բանակցությունները: «Երբ այն ամբողջությամբ հաստատվի, դա կհարթի ճանապարհն ամերիկյան եւ հայկական ընկերությունների համար՝ կնքելու քաղաքացիական միջուկային նախագծերի վերաբերյալ համաձայնագրեր: Դա նշանակում է մինչեւ 5 միլիարդ դոլար սկզբնական ամերիկյան արտահանում, գումարած լրացուցիչ 4 միլիարդ դոլարի երկարաժամկետ աջակցություն վառելիքի եւ սպասարկման պայմանագրերի միջոցով: Սա դասական փոխշահավետ գործարք է թե՛ Հայաստանի, թե՛ Ամերիկայի Միացյալ Նահանգների համար: Սա նշանակում է ավելի ուժեղ էներգետիկ անվտանգություն իմ երկրի համար, եւ ես նաեւ կարծում եմ, որ դա նշանակում է ավելի ուժեղ էներգետիկ անվտանգություն Հայաստանի համար, եւ դա նաեւ կստեղծի բազմաթիվ նոր աշխատատեղեր ԱՄՆ-ում: Սա նշանակում է փոքր մոդուլային ռեակտորներ, ամերիկյան տեխնոլոգիաները կգան այս երկիր»:

5 միլիարդ ամերիկյան արտահանումը նշանակում է, որ ամերիկյան մոդուլային ատոմային ռեակտորը կամ ռեակտորները, որոնք հայտնի չէ, թե ինչ հզորություն ունեն, Հայաստանին արժենալու են 5 միլիարդ ամերիկյան դոլար: Եվս 4 միլիարդ դոլար արժենալու են միջուկային վառելիքը եւ այդ ռեակտորների սպասարկումը: Դատելով ԱՄՆ փոխնախագահի խոսքից՝ ատոմակայանների արժեքը Հայաստանը պետք է վճարի ամբողջությամբ եւ իր ունեցած միջոցներից, իսկ վառելիքը եւ սպասարկումը կարվի ինչ-որ այլ մեխանիզմով, հնարավոր է՝ ԱՄՆ-ի կողմից տրամադրվող վարկի: Ջեյ Դի Վենսը չի էլ թաքցնում, որ դրա արդյունքում մեծանալու է ԱՄՆ-ի էներգետիկ անվտանգությունը, քանի որ Հայաստանը 9 միլիարդի ներդրում է անելու ամերիկյան միջուկային արդյունաբերության մեջ, ստեղծելու է նոր պատվեր, ապահովելու է ամերիկյան ընկերությունների համար նոր աշխատատեղեր եւ եկամուտ:

Այս առիթով առաջանում են մի շարք հարցեր. ամենակարեւորն այն է, որ ԱՄՆ-ն չունի մոդուլային ատոմային ռեակտորներ, որեւէ կառուցված եւ շահագործվող ռեակտոր գոյություն չունի, կան ինչ-որ նախագծեր, բայց ոչ հաջողված օրինակներ: Հայաստանը պետք է սպասի, թե որքան՝ հայտնի չէ: Եթե անգամ այդ ռեակտորները լինեին, որտեղից Հայաստանը պետք է վերցնի այդ 5 միլիարդ դոլարը, կամ ինչպիսի մեծ լավություն է անում ԱՄՆ-ն՝ հայ հասարակության վրա բարդելով եւս 4 միլիարդ դոլարի վարկ: Պատկերացնո՞ւմ եք, թե ինչ կարժենա ամերիկյան մոդուլային ռեակտորի արտադրած էլեկտրաէներգիան, եթե դրա արժեքը լինելու է 9 միլիարդ դոլար, գումարած այդ վարկի սպասարկման տոկոսները, բացի վարկը, ուրիշ տարբերակ ուղղակի գոյություն չունի, ըստ գործող ռեժիմի պարագլխի, Հայաստանը նույնիսկ քովիդի դեմ է վարկային միջոցներով պայքարում:

Իսկ հիմա՝ ուշադրություն. Թուրքիայում ռուսական «Ռոսատոմ» ընկերությունը կառուցում է ատոմակայան՝ կազմված չորս էներգաբլոկից, յուրաքանչյուրի հզորությունը՝ 1200 մեգավատ: Համեմատության համար ասենք, որ Հայաստանի ատոմային էլեկտրակայանի երկրորդ էներգաբլոկի հզորությունը, որը 1995 թվականին վերագործարկվել է, 400 մեգավատ է, եւ այն չի համարվում փոքր կամ մոդուլային: Թուրքիայում կառուցվող էներգաբլոկներից յուրաքանչյուրի արժեքը կազմում է ընդամենը 6 միլիարդ դոլար: 6 միլիարդ դոլար՝ 1200 մեգավատի համար, եւ 9 միլիարդ՝ մոդուլային էներգաբլոկի համար, որի հզորությունն անհայտ է: Ընդ որում, «Ռոսատոմը» կառուցում է իր միջոցներով, պայմանով, որ ինքն էլ վաճառելու է էլեկտրաէներգիան եւ ստացած շահույթով փակելու է իր ծախսերը:

Ամերիկացիները հայերին դրել են կատարյալ տգետի տեղ, որոնք ո՛չ հաշվել գիտեն, ո՛չ համեմատել: Կա՞մ Հայաստանը համարում են իրենց անձնական օգտագործման անասնաֆերման, իսկ հայ հասարակությանը՝ անասունների հոտ, որի գոյության եւ կյանքի իմաստն իրենց գոյությամբ եւ աշխատանքով ամերիկյան տերերին եկամուտ ապահովելն է:

ԱՄՆ-ի համաշխարհային հեգեմոնիայի՝ առաջնորդության վերջը եկել է, աշխարհի բազմաթիվ երկրներ միավորվում են՝ այդ առաջնորդության վերջը տալու եւ ավելի արդար համաշխարհային կարգ հաստատելու համար, Հայաստանը, փոխանակ միանալու այդ պայքարին, ավելի ու ավելի է խրվում ստրկության ճահճի մեջ, որովհետեւ Փաշինյանի երազանքը բազմաստիճան ստրկությունն է, ինքը ստրուկ է ամերիկացիների մոտ, ամերիկացիներն իրեն վերակացու են նշանակում հայ ստրուկների վրա: Անգամ եվրոպացիներն են ընդվզում ԱՄՆ-ի դեմ, տեսեք, թե ինչպես են սուլում նույն Ջեյ Դի Վենսին Միլանի մարզադաշտում, երբ նա ԱՄՆ-ի օլիմպիական հավաքականի հետ անցնում է տրիբունաների մոտով:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԻՆՉՈ՞Ւ ՊԵՏՔ Է ԱՅՑԵԼԵՐ, ՈՐՈՎՀԵՏԵՎ ՀԱՎԱՏԱՑՅԱ՞Լ Է

ԱՄՆ փոխնախագահ Ջեյ Դի Վենսը կնոջ՝ Ուշա Վենսի հետ Ադրբեջան մեկնելուց առաջ այցելեց Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, ծաղկեպսակ դրեց Մեծ եղեռնի զոհերի հիշատակին: Ոստիկանները փակել էին հուշահամալիր տանող բոլոր ճանապարհները: ԱՄՆ փոխնախագահին համալիրի շեմին դիմավորել է Հայաստանի ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը, բայց հուշահամալիր ուղեկցել է Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն Էդիտա Գզոյանը եւ ՀՀ-ում ԱՄՆ գործերի ժամանակավոր հավատարմատար Դեյվիդ Ալենը: Վենսը գրառում է կատարել Հայոց ցեղասպանության թանգարանի Պատվավոր հյուրերի հուշամատյանում՝ նշելով. «Կորցրած կյանքերի հանդեպ խորին հարգանքի հիշատակով մենք պատվում ենք հայ ժողովրդի տոկունությունն ու անսասան ոգին: Թող Ամերիկան եւ Հայաստանը միասին ձգտեն խաղաղության եւ փոխըմբռնման ապագայի»: Բայց թանգարան չի մտել:

ԱՄՆ փոխնախագահն ամերիկյան վարչակազմի ամենաբարձրաստիճան պաշտոնյան է, որ այցելել է Հայաստան, եւ առաջինը, որ կայցելի Ադրբեջան՝ 2008 թվականին նախկին փոխնախագահ Դիք Չեյնիի այցից հետո: Չեյնին նույն՝ 2008-ին այցելել էր նաեւ Վրաստան, իսկ ԱՄՆ նախկին նախագահ Ջորջ Բուշ կրտսերը Թբիլիսի էր այցելել 2005 թվականին: Ջո Բայդենը եւս Վրաստան է այցելել 2009 թվականին, երբ զբաղեցնում էր փոխնախագահի պաշտոնը: Վենսի այցի պաշտոնական պատրվակը 2025-ի օգոստոսին Սպիտակ տանը ԱՄՆ միջնորդությամբ Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ կնքված պայմանագրերն էին, մասնավորապես՝ Թրիփի ուղին եւ էներգետիկ պայմանավորվածությունները: Պաշտոնապես ասվեց՝ գալիս է այդ ծրագրերն «առաջ գցելու»:

Սակայն Ջեյ Դի Վենսի այցից առաջ մեծ սպասելիքներ կային, մասնավորապես՝ որ նա կաջակցի Բաքվի բանտերում գտնվող գերիների եւ Հայաստանի բանտերում գտնվող քաղբանտարկյալների ազատ արձակմանը: Որ նա կայցելի Մայր Աթոռ եւ, որպես հավատացյալ կմիջամտի Եկեղեցու դեմ արշավին, որը նախաձեռնել է Նիկոլ Փաշինյանը: Մինչդեռ Վենսը, կարելի է ասել, ճիշտ հակառակն արեց՝ չմիջամտեց քաղաքական հետապնդումներին եւ Եկեղեցու դեմ արշավանքին, դեռ մի բան էլ իր աջակցությունը հայտնեց Նիկոլ Փաշինյանին՝ առաջիկա ընտրությունների կտրվածքով, միջամտելով Հայաստանի ներքին կյանքին: Իսկ երեկ առավոտյան իր սոցիալական ցանցի էջում սկզբում գրառում արեց Հայոց ցեղասպանության հուշահամալիր այցելության մասին, ապա 2 ժամից հեռացրեց այդ հրապարակումը, որտեղ երկու անգամ հիշատակվել էր «Հայոց ցեղասպանություն» եզրույթը: Վենսի հրապարակումը փոխարինվել է նրա մամուլի քարտուղար Թեյլոր Վան Քիրքի վերահրապարակմամբ՝ Ջեյ Դի Վենսի եւ նրա կնոջ այցելության մասին, որում ասվում է. «Հայաստան կատարած մեր այցի վերջին օրը ծաղիկներ խոնարհեցինք Անմար կրակի մոտ եւ գրառում կատարեցինք պատվավոր հյուրերի գրքում»: Նկատենք նաեւ, որ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վենսը պահպանողական քաղաքական գործիչ է, որը հետաքրքրված է կրոնական թեմաներով, ավելին՝ անգամ նրա մասին ասում են, որ նա մոլի հավատացյալ է, ակնկալվում էր, որ այցելելու է նաեւ Մայր Աթոռ՝ կաթողիկոսի հետ հանդիպման նպատակով, սակայն այդ հանդիպումն էլ տեղի չունեցավ:

Տեր Նշան քահանա Պանֆյորովին «Հրապարակը» հարցրեց՝ ի՞նչ սպասելիքներ ուներ հոգեւորականը Վենսի այցից: «Ես անձամբ ոչ մի սպասելիք էլ չունեի, որ պետք է այցելեր եկեղեցի: Ինչո՞ւ պետք է այցելեր, որովհետեւ հավատացյա՞լ է, չէ, նա քաղաքական գործիչ է, կան քաղաքական շահեր: Ինչ է՝ Վենսը չգիտի՞, թե Հայաստանում ինչ է կատարվում, ամեն ինչ էլ շատ լավ գիտեն, իրենց նախապես ամեն բան զեկուցում են: Առանց այցելության էլ բոլորն էլ գիտեն, թե Հայաստանում ինչ է կատարվում, գիտեն, որ բանտարկված են մի շարք հոգեւորականներ, սրբազաններ: Մարդիկ սպասում են, որ ինչ-որ մեկը գա, նամակ փոխանցեն, բայց նրանք ամեն ինչ լավ էլ գիտեն: Ի վերջո՝ ամենամեծ դեսպանատունն են Հայաստանում բացել, սակայն քաղաքականությունը միշտ էլ մնում է քաղաքականություն»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՄՈՍԿՎԱՆ ՈՉ ՄԻԱՅՆ ՀԱՏԱԿ ՊԱՐԳԱԲԱՆՈՒՄ Է ՊԱՀԱՆՋՈՒՄ, ԱՅԼԵՎ՝ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆՈՒՄ

«Հրապարակի» զրուցակիցը քաղտեխնոլոգ, վերլուծաբան ***Վիգեն Հակոբյանն*** *է:*

- Աժ խոսնակ Ալեն Սիմոնյանի եւ ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովի մոսկովյան բանակցություններն ուշագրավ էին մի քանի առումով: Նախ, Լավրովը նշեց, որ Հայաստանը ԵԱՏՄ-ին անդամակցությունը չի կարող համատեղել ԵՄ-ին անդամակցելու հետ: Ասաց՝ Ռուսաստանը չի առարկում, որ իր գործընկերներից որեւէ մեկը զարգացնի իր արտաքին կապերն այլ ուղղություններով, սակայն ԵՄ գործընկերներն անընդհատ ընտրության առաջ են կանգնեցնում Հայաստանին: Ի՞նչ ընտրության մասին է խոսքը՝ Մոսկվային վերջնականապես եվրատլանտյան գործընկերներով փոխարինելո՞ւ:

- Կարծում եմ, Արեւմուտքը կամ եվրոպացիները նման պահանջ չունեն, որ Հայաստանը փոխարինի իր գործընկերներին, այսինքն՝ Ռուսաստանին կամ ԵԱՏՄ գործընկերներին՝ եվրատլանտյան գործընկերներով: ԵՄ-ում եւ ՆԱՏՕ-ում կամ այլ քաղաքական, ռազմաքաղաքական եւ տնտեսական կառույցում Հայաստանին չեն սպասում, որովհետեւ «ավելորդ բերան» այսօր որեւէ մեկին պետք չէ. այդ կառույցներն իրենք իրենց հազիվ են պահում, առավել եւս՝ բավականին լուրջ խնդիրներ կան հենց արեւմտյան աշխարհում: Հավանաբար դրանք ավելի մեծ են, քան Հայաստանինը: Հետեւաբար, ինչպես ասացի, ոչ ոք չի պահանջում, որ Հայաստանը փոխարինի իր գործընկերներին: Ինչպես նաեւ՝ Թուրքիայից եւ Ադրբեջանից, առնվազն ձգտում է քիչ թե շատ լոյալություն ստանալ նաեւ Ռուսաստանից: Հասկանալով, որ նախընտրական շրջանում այդ լոյալությունն անհրաժեշտ է Փաշինյանին եւ իր խմբին, ՌԴ-ն հարցն ուղիղ է դնում: Այսինքն, իրենք ասում են՝ ի վերջո, ժամանակն է, որ հստակ ասվի՝ հայտարարությունները, թե իբր ՀՀ իշխանությունների դեմ ինչ-որ «հիբրիդային պատերազմ» է վարվում, որտե՞ղ է դրա օջախը: Եթե Ռուսաստանն է, եւ եթե ՀՀ իշխանությունները Ռուսաստանին ընկալում են որպես «թշնամի», ապա Մոսկվան հստակ որոշումներ ընդունի, լեգիտիմացնի իր հնարավոր հակազդեցությունները ՀՀ ներկայիս իշխանությունների վարվող քաղաքականությանը: Այսինքն, Ռուսաստանը դիրքորոշման հստակ պարզաբանում է ուզում, եւ այն տոնը, որով դրա մասին ասում էր Լավրովը եւ ոչ միայն նա, ցույց է տալիս, որ Մոսկվան ոչ միայն հստակ պարզաբանում է պահանջում, այլեւ նախազգուշացնում է, որ համապատասխան միջոցներ կձեռնարկի՝ Հայաստանի դիրքորոշումից ելնելով:

- Գրեթե նույն ժամանակ ՌԴ փոխվարչապետ Օվերչուկը Երեւանին զգուշացրեց ԵՄ-ի վտանգավոր բնույթի մասին՝ նշելով, որ այն վերածվում է ռազմաքաղաքական միության: Կրեմլը սկսել է լրջորեն մտահոգվե՞լ ՀՀ-ում իր դիրքերով:

- Օվերչուկն ըստ էության ասում է՝ մի բան էր ԵՄ-ն մի քանի տարի առաջ, մի բան է այսօր, նախկինում է՝ մի բան էր ԵՄ-ն մի քանի տարի առաջ, մի բան է այսօր, նախկինում աշխարհաքաղաքական, տնտեսաքաղաքական միասնական բեւեռ էր, որը ռազմաքաղաքական միություն չէր ներկայացնում իրենից՝ ընդդեմ Ռուսաստանի, ՌԴ-ի անվտանգությանը չէր սպառնում, հիմա հակառակն է: Իսկ ԵՄ-ի թիրախն այսօր դիտարկվում է որպես հնարավոր գործընկեր: Այս պայմաններում Մոսկվայի եւ Վաշինգտոնի միջեւ վարվող՝ փոխհամաձայնեցված փոխհարաբերությունները ստիպում են ԵՄ-ին նոր հենարաններ գտնել, այդ թվում՝ Ռուսաստանում: ԵՄ-ն այսօր, դարձ ի շրջանս յուր, ստիպված է հարաբերությունները վերականգնել ՌԴ-ի, նրա ղեկավարի հետ: Ինչ վերաբերում է, որ չհրապարակայնացվի Մոսկվայի հետ եվրոպական լիդերների շփումը, չեմ կարծում, որ ԵՄ ղեկավարները միմյանցից թաքուն են շփվում Կրեմլի հետ. պարզապես ուզում են պահել իրենց դեմքը, որովհետեւ ռուս-ուկրաինական պատերազմի ժամանակ կոշտ, ամպագոռգոռ, անպատասխանատու հայտարարություններ են արել, կոշտ հռետորաբանությամբ, նույն՝ ՌԴ ղեկավարի հասցեին եւ, ժարգոնային լեզվով ասած, չեն ուզում իրենց «թքածը լիզել»: Դրա համար ԵՄ-ում փորձում են գտնել նոր, այդ թվում՝ նաեւ անվտանգային հենարաններ, որովհետեւ կորցրել են ԱՄՆ-ի «անվտանգության բարձիկը»: Մյուս կողմից էլ ուզում են պահպանել իրենց դեմքը եւ հասնել սեփական ընտրություններին եւ սեփական ներքին քարոզարշավներին:

- Այս վերադասավորումների եւ նոր իրողությունների պայմաններում արդյո՞ք ՀՀ իշխանությունների արտաքին քաղաքականությունը հերթական ֆիասկոն չի ապրելու՝ կրկին հայտնվելով մեծ խաղացողների քաղաքական ու տնտեսական մամլիչի տակ:

- Արդյունքը չի կարող բարենպաստ լինել ՀՀ այսօրվա իշխանությունների համար, որովհետեւ նրանք փորձել են, լինելով թույլ, պարտված, ոչ ռեսուրսային եւ ոչ էֆեկտիվ իշխանություն, որը հայկենտրոն չէ եւ երրորդ կողմի շահերն է սպասարկում, ոչ թե համադրել աշխարհաքաղաքական տարբեր ուժային կենտրոնների շահերը, այլ խաղալ նրանց հակասությունների վրա, ինչն այնպիսի երկրների դեպքում, ինչպիսին մերն է, շռայլություն է, պարզ ասած՝ հիմարություն: Եվ այդ ապուշությունը բերում է նրան, որ Հայաստանը դարձել է գերտերությունների եւ ռեգիոնալ պետությունների հակասության վայր, որտեղ աշխարհաքաղաքական երկրները ոչ թե համագործակցում են, այլ՝ մրցում: Հայաստանը թույլ է տվել իրեն նման շռայլություն՝ մտնել մի խաղի մեջ, որտեղ ինքը որեւէ խաղաթուղթ չունի: Պարզ է՝ Արեւմուտքի եւ ՌԴ-ի հարաբերությունները կարող են լավանալ, վատանալ, սրվել կամ հարթվել, եւ եթե դու այդ խաղում դառնում ես պրոքսի պատերազմի ամբիոն, քո մասին շատ շուտ մոռանում են, դու մնում ես ցանկացած «փլատակի» տակ: ՀՀ իշխանությունները, չունենալով որեւէ ռեսուրս, նույնիսկ՝ ինտելեկտուալ, ճկունություն, պրոֆեսիոնալիզմ, նույն TRIPP ծրագրի դեպքում մենք ունենք մի իրավիճակ, երբ այն ձեռնտու չէ մեր տարածաշրջանում ազդեցիկ Իրանի եւ Ռուսաստանի համար: Կամ՝ ԱՄՆ-ի տնտեսական շահը, նաեւ՝ քաղաքական, կամ Թուրքիայի եւ Ադրբեջանի շահագրգռությունները, բայց Մոսկվան եւ Թեհրանը մրցելու են, բնականաբար, այս տարածաշրջանում իրենց վերահսկողության տակ իրենց մասնաբաժինը պահպանելու համար, եւ այստեղ գումարենք նաեւ Վրաստանի գործոնը, որը կորցնում է իր լոգիստիկ առավելությունը:

Արա ԱԼՈՅԱՆ

---

4 ՀՆԱՐԱՎՈՐ ՔԱՅԼ՝ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ԿՈՂՄԻՑ

Եվրամիությունը մշակում է Ուկրաինան արագացված կարգով իր կազմ ներառելու պլանը՝ գրում է Politico-ն: Այն կոչել են «հետադարձ ընդլայնում»: ԵՄ-ն Ուկրաինայի համար կարող է հետեւյալ 4 քայլը կատարել. 1-ին քայլով Եվրամիությունը կարող է Ուկրաինային նախնական աջակցություն ցուցաբերել՝ ոչ պաշտոնական ցուցումների տեսքով: Դա կարվի իրավական միջոցառումների հարցով բանակցությունների ընթացքում: ԵՄ եւ Ուկրաինայի ներկայացուցիչներն արդեն իսկ քննարկումներ են անցկացրել 6 հնարավոր ցուցումներից 3-ի վերաբերյալ, իսկ մարտին կայանալիք հաջորդ քննարկմանը մտադիր են շարունակել օրակարգը: Հայտնի է, որ Եվրամիությունը բարեփոխումների որակական բաղադրիչի մասով զիջումների գնալ չի պատրաստվում: 2-րդ քայլով հնարավոր է՝ ԵՄ անդամակցության պարզեցված մոդել ստեղծվի: Եվրահանձնաժողովի ղեկավար Ուրսուլա ֆոն դեր Լեյենն առաջարկել է մի քանի տարբերակ, որոնցից մեկը՝ հետադարձ ընդլայնումը, կօգնի փոխելու ԵՄ անդամակցության ընդունված կանոնները: Ըստ դրա, նախ երկիրն անդամակցում է Միությանը, հետո արդեն աստիճանաբար տրամադրվում են իրավունքներն ու պարտականությունները: Այսկերպ Բրյուսելը փորձելու է կարգավորել այն երկրների անդամակցության հարցը, որոնք չեն կարող դառնալ ԵՄ անդամ՝ կամ հակամարտությունների, կամ էլ արդեն ԵՄ անդամ որեւէ երկրի հակազդեցության պատճառով:

3-րդ քայլը վերաբերում է ԵՄ կազմում Հունգարիայի դիրքորոշմանը: Որոշ եվրոպացի գործիչներ հույս ունեն, որ Հունգարիայի վարչապետ Վիկտոր Օրբանն առաջիկա ընտրություններում կարող է պարտվել, եւ այնպիսի ղեկավար կգա, որն ավելի մեղմ կեցվածք ունի Ուկրաինայի հարցում: Սակայն չի բացառվում նաեւ, որ Վաշինգտոնի օգնությանը դիմելով՝ Բրյուսելը ճնշում գործադրի Օրբանի վրա: Հատկապես որ Ռուսաստանի հետ կապված սանկցիոն ճնշման հարցում արդեն Բրյուսել-Վաշինգտոն նման գործակցության եւ Օրբանի վրա համատեղ ճնշում գործադրելու նախադեպ կա: Եվ 4-րդ քայլով՝ չի բացառվում, որ Հունգարիային զրկեն ձայնի իրավունքից՝ ԵՄ պայմանագրի 7-րդ հոդվածը գործի դնելով, որն ամենալուրջ քաղաքական սանկցիան է, կիրառվում է այն դեպքում, երբ կա կասկած, որ ԵՄ անդամ երկիրը խախտում է Միության արժեքային բազան: Եթե Օրբանը հաղթի ընտրություններում, այս հարցը կքննարկվի Բրյուսելում:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿՅՈՂ

ԵԹԵ ԽՈՍՏՈՒՄԸ ՏՎԵԼ ԵՔ ՀՐԱՊԱՐԱԿԱՎ, ՉԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏՃԱՌՆ ԷԼ ՊԻՏԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՎ ԲԱՑԱՏՐԵՔ

Եթե փորձենք մեկ բառով բնութագրել Լոռու մարզի այսօրվա տնտեսական վիճակը, այդ բառը թերեւս լինի «դատարկություն»-ը: Դատարկություն ոչ միայն ֆիզիկական իմաստով՝ կիսափլված արտադրական շենքեր, լքված արտադրամասեր, այլեւ գաղափարական առումով՝ հստակ հեռանկարի, արդյունաբերական ինքնության բացակայություն: Մինչեւ անկախացումը միայն Վանաձոր քաղաքում գործում էր շուրջ 36 մեծ ու փոքր արդյունաբերական եւ գիտահետազոտական ձեռնարկություն: Քիմիական արդյունաբերություն, մեքենաշինություն, էլեկտրատեխնիկա, թեթեւ արդյունաբերություն, գիտահետազոտական ինստիտուտներ: Քաղաքն ուներ մոտ 160-165 հազար բնակչություն, եւ աշխատատեղի խնդիր գոյություն չուներ: Հիմա քաղաքը հազիվ ունենա 60-65 հազար բնակիչ, որոնց մի մեծ մասը չունի աշխատանք: Արտադրությունը ձեւավորում էր ոչ միայն զբաղվածություն, այլեւ քաղաքային միջավայր, մասնագիտական ավանդույթներ, սոցիալական կայունություն, լավատեսություն ապագայի հանդեպ: Այսօր այդ համակարգից մնացել է կմախքը: Գործող ձեռնարկությունները կարելի է հաշվել մեկ ձեռքի մատներով, դրանց մեծ մասն աշխատում է նախկին հզորությունների 5-15 տոկոսի սահմաններում: Մնացածը փակվել է, մասնատվել, թալանվել, վերածվել ոչ արտադրական օբյեկտների:

Լոռին Հայաստանի արդյունաբերական փլուզման խտացված պատկերն է: Նմանատիպ վիճակ է նաեւ Հրազդանում, Ալավերդիում, Չարենցավանում, Կապանում, Երեւանի նախկին արդյունաբերական գոտիներում: Հարց է ծագում՝ եթե արդյունաբերությունը կար, աշխատում էր, ապահովում էր հազարավոր աշխատատեղեր, անկախությունից հետո ինչու այն ոչ թե արդիականացվեց, այլ գրեթե ամբողջությամբ վերացավ: Կարի մի քանի արտադրական ձեռնարկությունները Լոռիում, որոնցում այսօր աշխատում է 2.5-3 հազար մարդ, գլխավորապես՝ կանայք, ընդհանուր դժգույն իրավիճակը չեն փոխում: Արդյունաբերական համակարգի կործանման հիմնական պատճառներից մեկն այն է, որ սեփականաշնորհումն իրականացվեց առանց արդյունաբերական ռազմավարության: Գործարանները չդիտարկվեցին որպես արտադրական օրգանիզմ, այլ ընկալվեցին որպես հող, շենք, սարքավորում, մետաղ: Շատ դեպքերում սեփականատերերը շահագրգռված չէին արտադրության շարունակմամբ: Տարածքների վաճառքից, սարքավորումների ապամոնտաժումից արագ շահույթ էր ստացվում: Ցավով հետեւում էինք, թե ինչպես են կարծանվում, մաս-մաս վաճառվում երբեմնի մեծ համբավ ունեցող «Ավտոգենմաշ» (ԽՍՀՄ-ում մեծ պահանջարկ ունեին հանրահայտ արտադրատեսակները՝ ավտոգենային սարքերը) գործարանի արտադրական մասնաշենքերը: Պետությունը ոչ միայն չկասեցրեց այդ գործընթացը, այլեւ ստեղծեց դրա իրավական հնարավորությունն ու պայմանները: Չհասկացան, որ արդյունաբերություն չունեցող երկիրը դառնում է ներմուծումից կախված, մշտապես տարադրամի պակաս զգացող տնտեսություն:

Եվ անկախության ողջ ընթացքում Հայաստանը փաստացի չունեցավ հստակ արդյունաբերական քաղաքականություն: Չսահմանվեցին առաջնահերթ ճյուղեր, չձեւավորվեց արդյունաբերության զարգացման երկարաժամկետ ծրագիր, կապ չհաստատվեց կրթության, գիտության եւ արտադրության միջեւ: Փոքր շուկա ունեցող, սահմանափակ ռեսուրսներով երկիրը չէր կարող արդյունաբերություն ունենալ այդ «ինքնահոսի» պայմաններում: Եվ մակրոտնտեսական թվերն էլ դա են ասում. 90-ականների սկզբին արդյունաբերությունը կազմում էր ՀՆԱ-ի շուրջ 40 տոկոսը, 2000-ականների կեսերին՝ մոտ 25 տոկոսը, վերջին տարիներին այդ ցուցանիշը, իմ տեղեկություններով, 15-18 տոկոսի սահմաններում է: Արտահանման կառուցվածքում գերակշռում են հանքահումքային արտադրանքը, ցածր մշակման աստիճան ունեցող մետաղները, որոշ վերամշակված սննդամթերք: Միաժամանակ, Հայաստանը տարեկան միլիարդավոր դոլարների լայն սպառման արդյունաբերական ապրանքներ՝ տեխնիկա, սարքավորումներ, մեքենաներ է ներմուծում: Հանրային պահանջարկը բավարարում է ոչ թե տեղական արտադրողը, այլ՝ ներմուծողը, որի իրավունքներն ավելի պաշտպանված են, քան արտադրողինը: Արտադրական վարկերը թանկ են, էներգակիրների գները ծանր բեռ են, մրցակցությունն անհավասար է, ինչը ցանկացած արտադրություն դարձնում է բարձրռիսկային, ոչ շահավետ: Փոքր ու միջին արտադրողը մրցում է ոչ թե տեղական արտադրողի, այլ՝ էժան ներմուծման հետ: Այս պայմաններում արդյունաբերություն ստեղծելը դառնում է խենթությանը սահմանակից խիզախություն: Ո՞վ է մեղավոր. մեղավոր են թե՛ օրենքները, թե՛ կառավարությունները: Տարբեր քաղաքական թիմեր եկել ու գնացել են, բայց արդյունաբերությունը երբեք չի դարձել իրական առաջնահերթություն: Տնտեսական աճն ապահովվել է ծառայությունների, առեւտրի, արտաքին փոխանցումների հաշվին: Սա աճ է, բայց ոչ զարգացում:

2018 թվականին իշխանության եկած քաղաքական ուժը արդյունաբերության թեմայով ոչ միայն հայտարարություններ արեց, այլ նաեւ կոնկրետ եւ հիշվող խոստումներ տվեց: Հայտարարում էին, որ Հայաստանում կարտադրվի լայն սպառման տեխնիկա՝ հեռուստացույցներ, սառնարաններ, լվացքի մեքենաներ: Խոսվում էր ներմուծման փոխարինման, աշխատատեղերի ստեղծման մասին: Խոստումները հնչում էին վստահ եւ հպարտ: Հանրությանը փոխանցվում էր ուղերձ, թե Հայաստանը կդառնա արդյունաբերական երկիր: Անցել է ավելի քան յոթ տարի: Սակայն այդ խոստումներից ոչ մեկը չի ստացել միս ու արյուն: Հայաստանում չեն ստեղծվել զանգվածային սպառման տեխնիկայի արտադրական հզորություններ, ներմուծման ծավալներն այդ ոլորտում չեն կրճատվել, տեղական բրենդներ չեն ձեւավորվել: Եթե խոստումը տրվել է հրապարակավ, ապա դրա չկատարվելու դեպքում հասարակությունն իրավունք ունի բացատրություն ստանալու: Սակայն դրանք մինչ օրս չեն հնչել:

Վանաձորի քիմիական համալիրը «քիչ էր մնում» դառնար արդյունաբերական վերածննդի խորհրդանիշ: Բայց այդպիսին դարձավ միայն խոսքային մակարդակում: Կազմակերպվեց երկու հանդիսավոր վերաբացման արարողություն՝ ուղեկցված պաշտոնական այցերով, հայտարարություններով, տեսախցիկներով: Հնչեցին կոնկրետ խոստումներ. այս ամսից՝ մելամինի արտադրություն, հաջորդ ամսի 12-ից՝ կարբամիդ, հետագայում՝ քիմիական այլ արտադրանք, իսկ սուտակի խմբաքանակներն արտադրամասում «հասունանում» են: Այս ամենը տեղի էր ունենում հատկապես ընտրությունների նախաշեմին: Իսկ ի՞նչ ունենք այսօր: Գործարանը չի գործում որպես արտադրական համալիր: Խոստացված արտադրական ծավալները չեն իրականացվել: Վերաբացումները մնացին որպես քաղաքական արարողություն ու դատարկ խոսքեր: Իսկ երբ արդյունաբերությունը դառնում է նախընտրական հռետորաբանության մաս, բայց դուրս է մնում հետընտրական քաղաքականությունից, այն կորցնում է իր լրջությունը, ինչպեսեւ՝ այդ ամենի հեղինակ իշխանությունը: Արդյունաբերությունը վերածվում է կարգախոսի, ոչ թե ռազմավարության: Կարելի էր գոնե անկեղծորեն խոստովանել սխալների, չկատարված հաշվարկների, փոխված պայմանների մասին: Բայց դա էլ չի հնչում: Արդյունքում, Հայաստանն ունի առանձին արտադրություններ, բայց չունի ամբողջական արդյունաբերական համակարգ: Իսկ առանց համակարգի երկիրը չի կարող լինել կայուն, ինքնաբավ եւ անվտանգ: Երկիրը, որը հիմնականում արտահանում է հումք եւ ներմուծում պատրաստի արտադրանք, չի կարող երկարաժամկետ զարգացում ապահովել:

Մինչդեռ Լոռին կարող էր լինել վերակենդանացված արդյունաբերական մարզ: Այն ուներ ենթակառուցվածքներ, մասնագետներ, ավանդույթներ: Բայց այդ հնարավորությունը բաց թողնվեց: Սա, իհարկե, պետք չէ դիտարկել որպես ավարտված պատմություն, այն կարող է շարունակություն ունենալ: Սակայն արդյունաբերությունը հնարավոր է վերակենդանացնել միայն այն դեպքում, երբ այն դառնա պետական մտածողության առանցք: Փոքր երկիրը չի կարող ամեն ինչ արտադրել, բայց կարող է ընտրել այն, ինչ կարող է եւ հնարավոր է արտադրել: Իսկ դա պահանջում է երկարաժամկետ կամք:

ՀԳ. *Հայ ժողովրդի իրական դժբախտությունը ոչ թե արդյունաբերություն չունենալն է, այլ՝ տասնամյակներ շարունակ արդյունաբերությունը որպես արժեք չընկալելը եւ ամենակարեւորը՝ դա չընկալող իշխանություններ ունենալը:*

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆՈՐ ԳՐԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱԼԻՔ Է ՍՊԱՍՎՈՒՄ

Ռուսաստանի մշակույթի նախարարությունն այս տարվա մարտի 1-ից սկսում է բոլոր այն կինոնկարների ստուգումը (ըստ էության՝ գրաքննությունը), որոնք չունեն կինովարձույթ դուրս գալու արտոնություն: Նպատակը պարզելն է, թե որ ֆիլմերն են վարկաբեկում ավանդական արժեքները, եւ դրանց տարածումը կանխեն: Նախարարության հրամանագրից պարզ է դառնում, որ եթե մասնագիտական եզրակացություն լինի, որ այս կամ այն կինոնկարը կամ կինոնկարները վարկաբեկում են ռուսական հոգեւոր-բարոյական արժեքները կամ քարոզում են դրանց ժխտում, կամ եթե նմանատիպ բովանդակությամբ ահազանգ ստացվի այն կինոնկարի համար, որը հրապարակվել է տեսալսողական որեւէ սերվիսում կամ սոցկայքում, ապա կկայացվի համապատասխան որոշում:

Ընդ որում, մշակույթի նախարարությունն կարող է ազատորեն ահազանգել յուրաքանչյուր անձ՝ առանց հատուկ ընթացակարգերի: Հարկ եղած դեպքում մշակույթի նախարարությունը քննվող խնդրահարույց կինոնկարի մասին կարող է կարծիք հարցնել գիտական եւ կրթական հաստատություններից կամ էլ մշակութային համայնքի հեղինակավոր անդամներից: Ոչ պակաս, քան 420 որպե տեւողությամբ կինոնկարների ստուգումը չպետք է գերազանցի 20 օրը: Խախտումը հայտնաբերելու դեպքում մշակույթի նախարարությունը համապատասխան գրավոր դիմում կներկայացնի «Ռոսկոմնադզորին»: Վերջինս իր հերթին կինոնկարը ստեղծողներից կամ տարածողներից պահանջելու է ոչ ավել, քան 24 ժամում հեռացնել կինոնկարը: Պահանջ կարող է ներկայացվել նաեւ այն հայտնի էջերի սեփականատերերին, որոնց սոցկայքային էջերի լսարանն օրական գերազանցում է 500 հազար դիտումը, եւ որոնք «անընդունելի բովանդակությամբ» տեսանյութեր են տեղադրել: Անընդունելի բովանդակությամբ ժապավենները նաեւ չեն ստանա վարձույթ դուրս գալու արտոնություն: Մշակույթի նախարարությունը կարող է փոփոխել նախկինում տրված արտոնագրերը, եթե մասնագիտական եզրահանգումը չխոսի հօգուտ ընդունված չափանիշների: Գրաքննվելու են թե՛ ռուսական, թե՛ արտասահմանյան կինոնկարներն ու սերիալները: Ավանդական արժեքների հարցում ղեկավարվելու են ՌԴ նախագահի թիվ 809 հրամանագրով, որտեղ սահմանված է, թե ինչ բան է ավանդական արժեքը, եւ որոնք են ՌԴ-ում համարվում ավանդական արժեքներ: Բայց պարզ է, որ դրանք շատ ընդհանրական սահմանումներ են, եւ սա պարզ գրաքննություն է, որն իշխանությունը կիրառում է անցանկալի կոնտենտի նկատմամբ:



Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ՝ ԱՆՄԻՏ ԾԱԽՍԵՐՈՎ, ՎԱՐՉԱՊԵՏ՝ ԱՌԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ

Երեւակայությունը վտանգավոր բան է: Հատկապես այն դեպքում, երբ սկսում է հիշեցնել իրականությունը... Մի քիչ մեր երեւակայությանը զոռ տանք:

Հայաստանյան բոլոր լրատվամիջոցները ՀՀ վարչապետի գրասենյակից միանման գրություններ ստացան. «Իմ շատ թանկագին բարեկամներ, երեկոյան Ձեզ հրավիրում եմ կառավարական առանձնատուն: Լինելու են մեծ անակնկալներ: Խնդրում եմ՝ բաց մի թողեք հնարավորությունը»:

Ստորագրություն՝ Ժողովրդի ընտրյալ վարչապետ:

Լրագրողները, բնականաբար, գնացին: Նրանց դիմավորեցին փափուկ նստարաններ, բարեհամբույր ժպիտներ եւ մի քանի պաշտոնյա, որոնք ժպտում էին այնքան ջերմ, կարծես հենց նոր էին պարգեւավճար ստացել: Յուրաքանչյուր ժամանողին անձամբ ողջունում էր վարչապետը՝ թմբուկի բարձրաձայն զարկերով: Երբ տեղեկացրին, որ ներկա է լրատվական ողջ դաշտը, թմբուկները թնդացին առանձնակի ոգեւորված: Վարչապետը մոտեցավ բարձրախոսին.

- Բարի տեսանք, սիրելի գործընկերներ:

Ես այսօր այստեղ եմ՝ անկեղծ լինելու համար: Ես վերահիմաստավորել եմ իմ ողջ վարչապետական գործունեությունը: Եկեք արձանագրենք՝ ես սխալներ եմ գործել: Շատ: Դուք ինձ զգուշացրել եք, ես չեմ լսել: Դուք ասել եք՝ «կանգ առ», ես արագացրել եմ քայլս: Ես պայքարել եմ բոլորի դեմ եւ վերջապես հասկացել, որ կռիվ եմ տվել... հողմաղացների դեմ: Երեկվանից փոխվել եմ: Դարձի եմ եկել: Այսօր ես պատրաստ եմ պատասխանել ձեր բոլոր հարցերին: Տվեք:

Լրագրողները մի պահ լռեցին: Հետո սկսվեց:

Հարց - Պարոն վարչապետ, Դուք ընտանեկան ծախս չունեք: Տան վարձ չեք մուծում, կոմունալ չեք վճարում, սնունդը պետական է, մեքենաները պետական են, ուղեւորությունները՝ նույնպես: Այդուհանդերձ, միայն անցյալ տարեվերջին Դուք մոտ 14 միլիոն դրամ ստացաք՝ աշխատավարձի եւ հավելավճարի տեսքով...

Պատասխան - Դա ծախս չէ: Դա գնահատական է:

Հարց - Երբ մարդը ծախս չունի, բայց միլիոններ է ստանում, դա պետության համար բեռ չէ՞:

Պատասխան - Պետության համար բեռ են միայն դժգոհ մարդիկ:

Հարց - Այդ 14 միլիոնը մոտավորապես մեկ թոշակառուի 15-20 տարվա թոշակն է: Կողմնորոշվե՞լ եք՝ ինչի վրա եք ծախսելու այդ գումարը:

Պատասխան - Թոշակառուն չպետք է գումարով մտածի: Նա պետք է հավատա պետությանը:

Հարց - Բայց Դուք՝ ինքներդ եք ասել՝ «թոշակառուն ի՞նչ պիտի անի 10 հազար դրամը»: Ինչո՞ւ չեք բարձրացնում թոշակները եւ թողնում, որ քաղաքացին իրացնի սահմանադրական իր իրավունքը՝ ինքը որոշի՝ ինչի վրա ծախսի իր գումարը:

Պատասխան - Քաղաքացին պատրաստ չէ այդ պատասխանատվությանը:

Հարց - Ձեր արտասահմանյան այցերին պետական ինքնաթիռում մշտապես ներկա է, ձեզ մշտապես ուղեկցում է Աննա Հակոբյանը: Դուք Եկեղեցով պսակված չեք, ՁԱԳՍ-ում գրանցված չեք: Պետության հաշվին դա իրավաչա՞փ է:

Պատասխան - Մենք ապրում ենք նոր Հայաստանում: Այստեղ ընտանիքը գրանցվում է սրտում: Բյուջեն՝ փաստաթղթերում:

Հարց - Դուք պայքարում եք Եկեղեցու դեմ՝ հայտարարելով, որ այնտեղ պղծություն կա: Բայց Ձեր անձնական կյանքը նույնպես չի համապատասխանում եկեղեցական կամ ավանդական քաղաքացիական չափանիշներին: Սա հակասություն չէ՞:

Պատասխան - Պղծության դեմ պայքարելու համար պետք է այն լավ ճանաչել:

Հարց - Դուք բազմիցս ասել եք՝ եթե ժողովուրդը դժգոհ է, թող հեղափոխություն անի: Բայց դժգոհ քաղաքացիները ձերբակալվում են: Ինչո՞ւ:

Պատասխան - Ոչ բոլոր հեղափոխություններն են որակյալ լինում «թավիշի» նման:

Հարց - Անցյալ տարեվերջին բարձրաստիճան պաշտոնյաներին բաշխվեցին միլիարդավոր դրամների պարգեւավճարներ: Հայտարարեցիք, որ դա միայն առաջին կիսամյակի համար է: Նշանակում է՝ երկրորդ կիսամյակի համար ե՞ւս պարգեւավճարներ կլինեն: Նախընտրական կաշառքի խոստո՞ւմ է:

Պատասխան - Ոչ: Պարգեւավճարները շարունակական բարեփոխում են:

Հարց - Այս տարի մինչեւ 7 տարեկան հասակը մահացել է 207 երեխա: Ցուցանիշի աճը՝ 8 տոկոս: Առողջապահության նախարարը խորհուրդ է տալիս՝ երեխաներին հեռու պահել դեղերից: Սա լուրջ պատասխա՞ն է համարվում:

Պատասխան - Ամեն մահ ողբերգություն է: Բայց ամեն ողբերգություն քաղաքականություն չէ:

Հարց - Ձեր բացակայության օրերին երկրում նկատվում է հարաբերական անդորր: Չե՞ք մտածել այդ վիճակը դարձնել երկարաժամկետ պետական քաղաքականություն:

Վարչապետը ժպտաց - Եկեք պայմանավորվենք՝ որքան էլ փորձեք ինձ հունից հանել ու ինձ պարտված տեսնել, ես ինձ պարտված չեմ ճանաչելու:

Հարց - Այդ դեպքում ինչո՞ւ է այս հավաքը:

Պատասխան - Ձեզ ապացուցելու, որ ես դեռ ձեր վարչապետն եմ: Եվ ահա ամենամեծ անակնկալը: Վարչապետիս որոշմամբ բոլոր լրագրողներն ու լրատվամիջոցները պարգեւատրվում են երեք միլիոնական դրամով: Սահմանվել են նաեւ «Փշոտ խոսք» 1-ին աստիճանի, 2-րդ, 3-րդ աստիճանի շքանշաններ՝ ամենահամարձակ հարցերի համար:

Նա շտապեց դեպի թմբուկները: Ետ նայեց... նստարանները դատարկ էին:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 11.02.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ՄԺԵՂՆԵՐՆ ՈՒ ՊԱՊՈՒԿՆԵՐՆ ԱՎԵԼԻ ՀԱՅՐԵՆԱՍԵՐ ԵՆ

Հայերը տարբեր ժամանակներում մեծ հաղթանակներ ու մեծ պարտություններ են կրել, որի արդյունքում նաեւ պետություն ու պետականություն ենք կորցրել, բայց դրանից դասեր չենք առել եւ այսօր էլ նույն իրավիճակում ենք հայտնվել: 2020 թ. արցախյան երկրորդ պատերազմից հետո Արցախը լիովին հայաթափվեց, Ադրբեջանը սուվերեն Հայաստանից զավթեց մոտ 250 քառ. կմ տարածք: Իսկ պատճառները բազմաթիվ են՝ սկսած դավաճանությունից, վերջացրած վախկոտությամբ ու անտարբերությամբ: Կողքից նայողի մոտ տպավորություն է առաջանում, որ աշխարհասփյուռ հայությունը հաշտվել է այն իրողության հետ, որ երկիրը հանձնվի Ադրբեջանին՝ «այլ տարբերակ» չեն տեսնում: Սակայն մի բան է չտեսնելը, մեկ այլ բան է ճորտի պես ձեռքերը բարձրացրած, առանց պայքարի հանձնվելը:

Այսօր հայկական բանակն անուժ եւ ամլացած է, հայ ժողովուրդը, ՀՀ իշխանությունները եւ ընդդիմությունը կա՛մ չեն կարողանում, կա՛մ չեն ուզում ուժ գործադրել, համախմբվել, համատեղ ուժերով փորձել՝ փրկել երկիրը: Մեր ժողովուրդը չի հասկանում, որ երկրի վիճակը կրիտիկական է, եւ միայն համախմբման պարագայում հնարավոր կլինի երկիրը փրկել սպասվող կործանումից: Իսկ ընդդիմությունը ոչ մի քայլ չի ձեռնարկում: Օրինակ, կարող էր հանրաքվեի հարց մտցնել ԱԺ օրակարգ, մերժելու դեպքում՝ ստորագրությունների հավաքելու ճանապարհով համաժողովրդական հանրաքվե պահանջեր: Իսկ հանրաքվեի պետք է դրվեր մեկ հարց՝ Ադրբեջանի հետ պայմանագրի եւ համաձայնության գալու հարցը: Այլ խոսքով, հայ ժողովուրդը կորոշեր՝ ինչ պայմաններով եւ ինչ համաձայնության գնալ Ադրբեջանի հետ, ինչին համաձայնություն տալ, ինչին դեմ լինել եւ այլն:

Թե հայերի ճնշող մեծամասնությունն ինչպես է մոտենում սեփական երկրի փրկության հարցին, փորձենք համեմատական անցկացնել պապուկների, մժեղների եւ հայերի պահվածքի միջեւ: Եթե քանդեք այդ միջատների բները, ապա կտեսնեք, թե քարերը բարձրացնելուց հետո նրանք ինչու եւ ինչպես են իրար գլխի հավաքված ապրում: Եվ դա անում են՝ փորձելով կուռ մնալ, դառնալով մի մեծ ամբողջություն, միասնաբար հաղթահարելով բոլոր վտանգներն ու պայքարելով թշնամիների դեմ ու պաշտպանելով միմյանց: Սակայն անգամ այս կրիտիկական վիճակում հայերն ապրում են միմիայն իրենց էգոյի համար, առանց հասկանալու, որ պառակտված ու տարանջատված ապրելը հեշտացնում է իրենց հաղթելը, բացում է թշնամու առաջ դռները, վտանգում հայրենիքը, խոցելի դարձնում նրա անվտանգությունը: Երբ մեր հայրենիքը վտանգված է եւ գայթակղիչ պատառ է մեր թշնամիների համար, այդ իրավիճակում անգամ մենք՝ բոլորս, մտածում ենք լոկ մեր անձի, լոկ նյութի մասին եւ մժեղների չափ հայրենասիրություն, ինքնապաշտպանական բնազդ էլ չունենք, որպեսզի հավաքվենք իրար գլխի եւ փորձենք միասին փրկվել ու փրկել մեր հայրենիքը: Անտարբեր ու անհաղորդ ապրում ենք, կարծես ամեն ինչ նորմալ է, եւ վախենալու ոչինչ չունենք:

Հայեր, խելքի եկեք, ինչի՞ վրա եք հույս դրել, կարծում եք՝ թուրք-ադրբեջանական տանդեմն այնքան է բարիացել, որ ձեզ հետ իրական խաղաղություն կկնքի, իսկ դուք ազատ ու անարգել կապրեք ձեր պատկերացրած «անկախ» Հայաստանում, որտեղ հավերժ «խաղաղությո՞ւն» կթեւածի...

Անանիա ՄԱՂԱՔՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am